Է՛ ՏԱՐԻ ԹԻՒ 1352 ԵՐԵՔՇԱԲԹԻ 5 ՅՈՒԼԻՍ 1888 (Ն. Տ.) 17 ՅՈՒԼԻՍ 1888 7 ՁԻԼԳԱՏԷ 1305

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՂՐԿԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան–խան
غلطه‌ده نورادونكیان خاننده آره‌ولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata,
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ,

Կ. Պոլսոյ համար Տարեկան	ղրշեկան արժեթ		160
» » Վեցամսեայ	»	»	80
» » Եռամսեայ	»	»	40
Գաւառաց եւ Արտաքին Թղթատարական տարեկան	»	»	240
Գաւառաց համար եւ Արտաքին Թղթատարական վեցամսեայ	»	»	120
Օտար երկիրներ, տարեկան		ֆրանք	58
» » վեցամսեայ		»	26

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 5 ՅՈՒԼԻՍ, 1888

ԵՐԵԿԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ
(ՅՈՒԼԻՍ 9ԷՆ ՄԻՆՉԵՒ 13 ՅՈՒԼԻՍ.)

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ԱՄԲԱՍՏԱՆԱԳԻՐ ԳԵՐՄԱՆ ԲԺՇԿԱՑ
ԸՆԴԴԷՄ ՏՔԹ. ՄԱՔԷՆԶԻԻ

Գերման կառավարութիւնն հրատարակեց Ֆրետերիկ կայսրն աւելի կամ նուազ դարմանող գերման փրոֆէսօրներուն և Տօքթօրներուն Տեղեկագիրը կամ լաւ եւս՝ Տեղեկագրաց շարքն, որք 103 էջէ բաղկացեալ հատորիկ մը կը կազմեն, տպուած Պերլինի կայսերական Տպարանին մէջ։

Այս բժշկական, բնագիտական և վիճաբանական երկասիրութեան հեղինակներն են Փրոֆէսոր Պարտըլէպէն, Պերկման, Կերհարտ, Թոպոլտ, Վալտայէր և Տքթ. Պրամ և Լանտկրաֆ, Պերլինի. Փրոֆէսոր Քուսմաուլ, Ստրազպուրկի. Տքթ. Շմիդ, Ֆրանքֆորթի, և Փրոֆէսոր Շրէօթըր, Վիէննայի։

Այս պատմութիւն, բժշկային նուրբ բացատրութեամբք խճողեալ, ամեն կէտերու վրայ ուղղեալ է ընդդէմ անգլիացի Տքթ. Մօրըլ Մաքէնզիի։ Գերման բժիշկները կը հաստատեն թէ, ի խորհրդակցութիւն հրաւիրուելով, 1887 տարւոյ մայիս ամսէն ի վեր համոզուած էին թէ Ֆրետերիկ Իշխանին հիւանդութիւնը քաղցկեղ էր, և արտաքին գործողութիւն մը անհրաժեշտ դատած էին։ Իրենք պատրաստուած էին Ֆրետերիկ Իշխանին կոկորդը կըտրել հանելու, երբ յոյս կար թէ այս արմատական գործողութեամբ նորա կեանքը պիտի փրկուէր, բայց առաւելագոյն ստուգութեան համար Տքթ. Մօրըլ Մաքէնզի եւս կանչուեցաւ, և հակառակեցաւ կոկորդի հանման, և հիւանդութեան բնութեան մասին իւր սխալ կարծեաց վրայ պնդեց մինչեւ 1887 դեկտ.ի վերջն։ Հիւանդին դարմանումը բացարձակապէս Տքթ. Մաքէնզիի յանձնուելով, իւր անհոգութիւնք աւելի եւս ծանրացուցին հանգուցելոյն վիճակը։ Ֆրետերիկ Իշխանին Անգլիա երթալն և կայսերական գահը բազմելէն եաքն ալ ի Պերլին յաճախակի դուրս ելնելը, զոր Տքթ. Մաքէնզի արտօնած էր, վնասեցին մեծապէս։ Վերջապէս, Տքթ. Մաքէնզի անփութութիւնն այն աստիճանի տարաւ որ անգամ մը՝ հիւանդին քով չգտնուելով՝ քիչ մնաց որ կայսրը խեղդամահ զոհ երթար անոր ապիկարութեան։

Այս ոճով կը խօսին և իրենց անգլիացի պաշտօնակիցը խստիւ կը դատապարտեն մանաւանդ Պ. Պերկման, որուն Սըր Մօրըլ Մաքէնզիի հետ գժտութիւնք՝ ի Սան Ռէմօ՝ մեծ աղմուկ հանեցին անցեալ ձմեռ, և Պ. Կերհարտ, որ կ'ամբաստանէ զՏքթ. Մաքէնզի թէ չատ թերի և անհոգ կերպիւ քննեց հիւանդին կոկորդն, և փոխանակ հիւանդ մասին կտորուանքը դուրս հանելով ենթարկելու Պ. Վիրխովի անդամազննութեան, կոկորդին առողջ մասը կտրեց դատապարտելի անհոգութեամբ։ Փրոֆ. Շրէօթըր ալ կը հաստատէ թէ Վիքթորիա կայսրուհին բացարձակապէս հակառակեցաւ կոկորդի ամբողջովին հանման, զոր անհրաժեշտ կը համարէին գերման բժիշկներն, և միայն կոկորդի ճեղքման հաւանութիւն տուաւ, զոր գերման բժիշկներն անբաւական կը համարէին, որպէս ստուգուեցաւ եաքէն։

* *

Թ—ն կ'ըսէ այս հրատարակութեան վրայ.

«Այս Տեղեկագիրը կրնայ ունենալ գիտնական արժէք մը զոր կարող չենք քննել և գնահատել։ Բայց քաղաքական և ընտանեկան պատճառութեանց տեսակէտով, այս պաշտօնագրաց հրատարակումն այնպիսի գործ մ'է որոյ նշանակութիւնն անտես առնուլ կարելի չէ, և որ լրագրութեան մէջ ամեն տեսակ մեկնութեանց առիթ պիտի տայ։

«Այս Տեղեկագիրը գերման կառավարութեան հրամանաւ յօրինեցաւ և հրատարակութեան տրուեցաւ, որպէս զի ամեն ոք կարդայ ամբաստանութիւններն որք կ'ուղղուին Տքթ. Մաքէնզիի դէմ, ինչպէս և ա՛ն անձանց դէմ որք կոչեցին անգլիացի բժիշկն և անխախտ վստահութիւն մը ցոյց տուին նմա։ Այս անձանց մէջ առաջին տեղը կը բռնէին Վիքթորիա կայսրուհին, և անոր շուրջը գտնուողներն։ Արդեամբ, Վիքթորիա կայսրուհւոյն դէմ կ'ուղղուի հրապարակային պարսաւն որու կ'ենթարկի Տքթ. Մաքէնզիի դրութիւնը, Վիքթորիա կայսրուհին անուղղակապէս այլ ո՛չ նուազ խստիւ կը պախարակուի զիւր ամուսին զրկելուն համար այն գերման բժշկաց խնամքէն, որք կը պնդէին թէ կարող էին երկարել Ֆրետերիկ Գ.ի կեանքը։

«Տքթ. Մաքէնզի զիւր պարտականութիւն ի՛նչ ձեւով ալ կատարած լինի, գերման բժշկաց Տեղեկագրոյն հրատարակումը չատ անպատեհ և անգութ գործ մը կը թուի։ Պաշտօնական տումարաց մէջ արձանագրեալ պահելու համար կ'արժէր անշուշտ հաւաքել հանգուցեալ կայսեր հիւանդութեան վրայ բժշկաց զանազան կարծիքները։ Բայց միւս կողմէ քաղաքական և ընտանեկան շահեր ալ կը պահանջէին հրապարակային պարսաւի մը չենթարկել Վիքթորիա կայսրուհին՝ իւր յամառութեամբ կամ տգիտութեամբ իւր ամուսնոյն կեանքը կրճատելուն համար։ Կարելի էր Վիքթորիա կայսրուհւոյն խնայել վիշտն այսպիսի հրապարակային վիճաբանութեան մը, որ անվերջանալի դառնալու երեւոյթ ունի, քանի որ Տքթ. Մօրըլ Մաքէնզի եւս պարտաւոր է պատասխանել։ Կարելի է ըսել հեգնօրէն թէ Ֆրետերիկ կայսր օգուտ չպիտի քաղէ իւր գերեզմանին վրայ բացուած այս վիճաբանութենէ, գիտութիւնն ալ հաւանօրէն չպիտի օգտի. միայն այրի կին մը կայ ոյր վշտահար սիրտը կը խոցոտէ բժշկաց այս վէճն, և որ իւր կնոջական անձնուիրութեամբ, եթէ ոչ այն լոյսերով որք թերեւս պակսեցան իրեն, արժանի էր ամենայն յարգանաց ու լռութեան։»

* *

Գերման բժշկաց Տեղեկագրոյն հրատարակումէն յառաջ, Տքթ. Մաքէնզի յայտարարած էր լրագրաց խմբագիրներու թէ հարկ պիտի համարի պատասխանել և ամեն բան երեւան հանել, եթէ իւր գերման պաշտօնակիցք անձնապէս հարուածեն զինք։

Հրատարակեցաւ գերման բժշկաց Տեղեկագիրն, որ ի սկզբան կարծուածէն չատ աւելի ջախջախիչ և մինչեւ իսկ անպատուիչ է Տքթ. Մաքէնզիի համար, բայց Թայմզ յուլիս 11 թուով հետեւեալը կը հրատարակէ.

«Սըր Մօրըլ Մաքէնզի երէկ իրիկուն յայտներ է թէ բացարձակապէս կը հերքէ գերման բժշկաց Տեղեկագրոյն պարունակութիւնն, որ ստութեանց շարք մ'է։ «Բայց պետական պատճառներ կան, կ'ըսէ Սըր Մօրըլ Մաքէնզի, որք անկարելի կ'ընեն Տեղեկագրոյն պարունակած յայտարարութեանց մանրամասն հերքումն։»

Անգլիոյ պաշտօնական բժշկական լրագիրն եւս յուլիս 12 թուով կը յայտարարէ թէ Տքթ. Մաքէնզի՝ բարձր տեղէ մը արտայայտուած բացարձակ փափաքանաց համակերպելով՝ առ այժմ չպիտի պատասխանէ գերման բժշկաց Տեղեկագրոյն, բայց կ'ըսէ թէ այս Տեղեկագիրը բազմաթիւ սխալներ կը պարունակէ, զորս պիտի հերքէ՝ արտօնութիւն ստանալուն պէս։

* *

Պերլին, 12 յուլիս.

Ի պատասխան այն լրագրաց որք զարմանք կը յայտնեն թէ Ֆրետերիկ Գ.ի հիւանդութեան վրայ գերման բժշկաց տեղեկագիրք աւելի չուտ չեն հրատարակուած՝ կայսրը փրկելու նպատակաւ, Նորտտոյչէ Ցայթունկ կ'ըսէ թէ բժիշկները ժամանակին դիմած էին Վիլհէլմ Ա. կայսեր և յայտարարած էին թէ իւր որդի անդարձ կորած է եթէ չարունակէ դարմանուիլ Տքթ. Մաքէնզիի կողմէ. կայսրը չատ յուզուեցաւ այս յայտարարութենէ, բայց պատասխանեց թէ իւր որդի 56 տարեկան է, և ինք անկարող է համոզել զնա որ Տքթ. Մաքէնզիէն զատ ուրիշ բժիշկներու խօսքը մտիկ ընէ։ Բայց Ֆրետերիկ Իշխանին յԱնգլիա ուղեւորութենէն յետոյ, Վիլհէլմ Ա. թախանձեց զնա որ Պերլին գայ, բայց ի զո՛ւր. Սըր Մօրըլ Մաքէնզիի ստիպմանց վրայ, որոշուեցաւ որ գահաժառանգը Թօպլախ երթայ։

ՆԱԹԱԼԻ ԹԱԳՈՒՀԻՆ ԵՒ ԻՒՐ ՈՐԴԻ

Վիեսպատըն, 10 յուլիս. Սերպ կառավարութիւնը պաշտօնապէս խնդրեց գերման իշխանութեանց աջակցութիւնը՝ գահաժառանգ արքայորդին Սերպիա բերելու համար։ Գերման իշխանութիւնք չմերժեցին իրենց աջակցութիւն. բայց աստ զրկուած սերպ պաշտօնեայք դեռ չխնդրեցին գործօն աջակցութիւն մը։

Վիեսպատըն, 11 յուլիս. Սերպիոյ Թագուհին գերման կառավարութեան պատուոյ խօսք տուաւ չմեկնելու Վիսպատընէ մինչեւ որ որոշում մը տրուի իւր գործի վրայ։ Գերման ոստիկանութիւնը կը հսկէ Թագուհւոյն վրայ։ Ոստիկանութեան նախագահն հարցուց Թագուհւոյն թէ կ'ուզէ՞ Փրօթիչ զօրավարին յանձնել գահաժառանգ իշխանը։ Թագուհին մերժեց։

Պելկրատ, 12 յուլիս. Գահաժառանգ արքայորդին աստ ի Պելկրատ կը սպասուի 48 ժամու մէջ, Վիսպատընէ մեկնած պահուն իրեն հետ պիտի գտնուին զօրավար Փրօթիչ և երկու բարձրաստիճան սպայք։ Միլան Թագաւոր, Վիեննայի սերպ դեսպանը, Սերպիոյ բոլոր նախարարք, խորհրդականք և բարձրաստիճան պաշտօնատարք երկաթուղւոյ կայարանին մէջ գահաժառանգին պիտի սպասեն։

Պերլին, 12 յուլիս. Նորտ Տոյչէ Ալկէմայնէ Ցայթունկ, խօսելով Նաթալի Թագուհւոյն ընթացքին վրայ,—որ չուզեր Սերպիոյ գահաժառանգն յանձնել Միլան Թագաւորին պատուիրակներուն, և իւր որդւոյ հեռացման կամ յափշտակման դէն ի ձեռին դիմադրել կ'ուզէ, և այս նպատակաւ զինած է իւր սպասաւորներ,—կ'ըսէ թէ փափաքելի է որ Նաթալի Թագուհին Գերմանիայէն դուրս բնակի՝ եթէ կ'ուզէ դիմադրել գերմանական իշխանութեանց։ (*)

Վիեսպատըն, 13 յուլիս. Սերպիոյ գահաժառանգն այս առաւօտ միջօրէէն երկու ժամ յառաջ յանձնեցաւ գերման ոստիկանութեան վերատեսչին։

Վիեսպատըն, 14 յուլիս. Նաթալի Թագուհին երէկ իրիկուն Վիեննա գնաց։

* *

Վիեննա, 9 յուլիս, առ Թայմզ. Նիչի Դեմետրիոս Եպիսկոպոսն այսօր Վիեննա հասաւ Վիսպատընէ, չյաջողելով հաշտութեան մը գալ Սերպիոյ Թագուհւոյն հետ, որուն Միլան Թագաւորին հետ իւր վէճեր առանձնակի կարգադրել չուզելը ցաւալի տպաւորութիւն կ'ընէ, Թագաւորին առաջարկներն այնպէս էին որ անոնց մերժումը ցոյց կուտայ թէ Թագուհին դէչ խորհրդականներու խօսքը մտիկ ըրած էր բոլոր այս գործի մէջ։ Նիչի Եպիսկոպոսն որ՝ Թագուհւոյն կողմէ չընդունուելուն համար՝ իւր բանիբը գրով հաղորդած էր Ն. Վեհափառութեան, առաջարկեց որ գահաժառանգ իշխանն առաջիկայ չորս ու կէս տարւոյ մէջ յառաջ տանի իւր ուսումները ի Գերմանիա, իւր մօր հսկողութեան ներքեւ միայն. և միայն մեծ արձակուրդներն իւր հօր քով անցունէ. Թագուհին պահէ իւր բոլոր տիտղոսներ ու իրաւունքներ ու Թոշակներ, բայց Սերպիոյ հողին վրայ ոտք չդընէ առանց Թագաւորին հրաւիրման. Թագուհին բացարձակապէս մերժեց այս իրաւախոհութիւն, համարելով զայն «անիրաւ և ապօրէն պարտաւորութիւն»։ Հետեւապէս, Միլան Թագաւոր դատական բաժանման հրամանագիր մը ձեռք բերելէ զատ ուրիշ միջոց չունի։ Սերպիոյ գահաժառանգն այս օրերս Վիսպատընէ պիտի մեկնի ի Պելկրատ, Վիսպատընէ հեռագրոյ մը նայելով, Նասաւի գերման կառավարիչն իմացուցեր է Թագուհւոյն թէ իշխանութիւնք չեն կրնար նպաստել իրեն, եթէ ընդդիմանայ գահաժառանգ արքայորդւոյն մեկնելուն։ Պելկրատէ հեռագրեր կը ծանուցանեն թէ ամեն չըջանակաց մէջ համակրանք կը ցուցուի Միլան Թագաւորին, որ իբրեւ հայր և իբրեւ վեհապետ սրբազան պարտաւորութիւն մը կը կատարէ և Թագուհւոյն ընթացքը կը վերագրուի քաղաքական օտար ազդեցութեանց։

Վիեննա, 12 յուլիս. Նոյէ Ֆրայէ Փրէսսէ կ'ըսէ թէ ռուս դեսպան մը ի Բերլին (կոմս Փաւել Շուվալով) յայտարարեր է սեղանաւորի մը թէ սխալ է լրագրաց այն հրատարակութիւն թէ ռուս կառավարութիւնը վերստին պիտի յուզէ պուլկարական խնդիրը։ Ռուսիա ամեն բանէ աւելի խաղաղութեան փափաքող է, և այս պատճառաւ Ցարն անչափ երկայնմտութիւն կը ցուցնէ Պուլկարներուն։ Պուլկարիոյ չպիտի դպչուի. Բաթէնպերկ Իշխանը չէ ճանչուած և չպիտի ճանչուի. Ռուսիա հանդարտ պիտի թողու զնա, եթէ Աւստրիոյ կողմէ ձեռնարկ մը չհարկադրէ զՌուսիա թողուլ ձեռնպահութիւնը։ Խաղաղութիւնը չպիտի խանգարի։ Սերպիոյ վերաբերեալ միայն մէկ փափուկ խնդիր կայ. բայց եթէ Աւստրիա ուղղամտութեամբ վարուի այս խնդրոյ մէջ, խաղաղութիւնն ապահովեալ է։

—Հռոմ, 11 յուլիս. Պապին նուիրակներն ամեն կառավարութեանց հաղորդեցին Ռամփոլլա գերապայծառին մէկ ծանուցագիրն, հաստատող թէ ի Հռոմ տեղի ունեցած հակապապական նորանոր և բուռն ցոյցերուն պատճառաւ, եւս քան զեւս անտանելի դարձած է վիճակն ուր կը թողու իտալեան կառավարութիւնն զՎատիկան և զԱթոռ քահանայապետական։

—Սոֆիա, 10 յուլիս. Կը հաւաստեն թէ Պուլկարիոյ ելմտական նախարարն առաջարկած է նախարարաց խորհրդին գնել Արեւելեան Ռումելիի կողմէ օսմ. կառավարութեան վճարելի գումարները։ Խորհուրդն առաջիկայ նստին մէջ պիտի քննէ այս առաջարկ. ելեւմտից նախարարն ի պաշտպանութիւն իւր առաջարկի կ'ըսէ թէ Բ. Դուռը չուզեր ճանչել Արեւ. Ռումելիի Թղթատարութիւնն և Պելլովա–Վաքարէլի գծին չահագործումը չի տար պուլկար ընկերութեան մը։

—Երէկի Սուրհանդակաւ առնուած լրագիրք կը ծանուցանեն թէ Աղեքսանդր Իշխան խիստ ծանր վտանգ մը անցուցած է՝ իւր կառքի հետ գլորուելով ձորի մը մէջ։ Իշխանը, չկրցուսանելով զիւր պաղարին, 15 մեթր վար կրցաւ մացառի մը կառչելով ազատիլ, մինչ ձին և կառքը գլորեցան գացին մինչեւ ձորին յատակն։ Իշխանին վէրքերը թեթեւ են։

—Չեռնակորայի Իշխանն իւր գահաժառանգ որդւոյ հետ Փեթերսպուրկ կ'երթայ։

—Քոնկոյի պետութիւնն հարցուց Սալզպըրի Մարքիզին թէ անգլ. կառավարութիւնը պաշտօնապէս կը վաւանակցի՞ արշաւանքի մը՝ Պ. Սթէնլիի վրայ տեղեկութիւն ստանալու նպատակաւ։ Լորտ Սալզպըրի պատասխանեց թէ անգլ. կառավարութիւնը չի կրնար միջամտել այս գործի, քանի որ իմացուցած էր Պ. Սթէնլիի՝ դեռ ճամբայ չելած՝ թէ պարտի ամեն վտանգ աչք առնլով ձեռնարկել իւր ուղեւորութեան և օգնութիւն չակնկալել անգլ. կառավարութենէն։

—Նաթալի Թագուհին առարկած լինելով թէ Ս. Սինոդն անձեռնհաս է ամուսնական բաժանման դատ մը տնօրինելու, Միլան Թագաւորն հրամայեց որ խնդիրն յանձնուի Պելկրատի կոնսիստորիայի ատենին։

—Նաթալի Թագուհին մտադիր է եղեր Ռուսիա քաշուիլ։

—Աւստրիոյ լրագիրք գրեթէ առանց բացառութեան Միլան Թագաւորին կողմը կը բռնեն, միաձայնութեամբ պնդելով թէ այս դատ քաղաքական է և ո՛չ թէ ամուսնական կամ ընտանեկան։ Նոյն տեսութեամբ ռուս լրագիրք միաձայնու Նաթալի Թագուհւոյն կողմը կը բռնեն, և խստիւ կը հարուածեն Միլան Թագաւորին թէ՛ քաղաքական ընթացքն և թէ ամուսնական կեանքը։

—Վիքթորիա Կայսրուհին, որ չատ կը սիրէ զԻտալիա և քաջ խօսիլ գիտէ, ի մօտոյ Ֆիորենզա պիտի երթայ, և ժամանակի մը համար հոն պիտի հաստատէ իւր բնակութիւն, Փալմիերի ամարանոցին մէջ։

—Ֆրետերիկ կայսեր բոլոր մտադրութեան առարկան եղեր են՝ իւր կենաց վերջին ամսոց մէջ երկու խնդիրներ. մին՝ իւր աղջկան Վիքթորիա Իշխանուհւոյն ամուսնութիւնը Պաթէնպերկեան Աղեքսանդր Իշխանին հետ, և միւսն՝ Ալզաս-Լօռէնի խնդիրն։ Եւ այս երկու խնդիրներ իւր մտաց մէջ զուգորդուած են եղեր, որովհետեւ կ'ուզէր իւր փեսայն՝ Աղեքսանդր Իշխանն, Ալզաս Լօռէնի կուսակալ կարգել, և ժամանակ մը եաքը, վերջնապէս լուծելու համար Ֆրանսայի հետ Գերմանիոյ մէջ առկախ մնացած ծանր խնդիրը, կը խորհէր ինքնօրէն Պետութիւն մ'ընել զԱլզաս Լօռէն, ընդ իշխանապետութեամբ Աղեքսանդր Իշխանի։ Այսպէս, կ'ըսէ եղեր Ֆրետերիկ կայսր, խաղաղութիւնը կը վերահաստատի Գերմանիոյ և Ֆրանսայի մէջ, և ազգերն ազատ չունչ կ'առնուն։

(*) Նաթալի Թագուհւոյն Գերմանիայէն արտաքսումը, զոր Հեռագիրը ծանոյց երէկ, վերագրելի է անշուշտ գերման իշխանութեանց դէմ գնելուն, որք եկած էին առնուլ և Պելկրատ ղրկել զիւր որդի։

—)(64)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔ-Ի

ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ԱՂՋԻԿԸ

ՊՈԼՍԱԿԱՆ ԲԱՐՔԵՐ

«Ի՞նչ հաշիւ, պէյ, հարցուցած էր Արամ զարմացմամբ.» Եւ Թորոս պէյ յայտնած էր թէ օտարի հաշւոյն իրեն վճարուած երկու հազար ոսկին Ջմիւռնիոյ խորն ունեցած ագարակի դատին համար իւր կողմանէ վճարուած ծախուց հաշւոյն վճարում մը կը համարէր, եւ թէ ամուսնութեան կատարման համար հա՛րկ էր որ չորս հազար ոսկի համրէին իրեն դարձեալ. «կատա՞կ կ'ընես, պէյ» գոչած էր Արամ ցասկոտ, մինչ պէյը սառնադէմ՝ «Ճիշդ չորս հազար ոսկի. ես նոյն իսկ երկու հազար ոսկիէն աւելի ծախք ըրի այդ դատին յաջողութեան համար, բայց ազնուութեան դէմ չըլլալու համար է որ երկու հազար ութնուկէս ոսկի չեմ պահանջեր կոր, որ է ծախուցս ճիշդ գումարը. պիտի ըսես որ դատը կորսնցուցինք, բայց ես ալ կ'ըսեմ որ նախնական դատարանին մէջ շահեցանք եւ վերաքննութեան մէջ կորսնցուցինք. ես նախնական դատարանին համար ըրած ծախքերս կը պահանջեմ, եւ կարծեմ թէ խնայութեամբ եղած է, որովհետեւ եօթանասունէն հինգ հազար ոսկի արժող դատի մը յաջողութեան համար երկու հազար մեծ դրամ չէ. բայց նո՛յն իսկ հօրդ անմտութեամբ կորսնցուցինք. երբ ըսի իրեն թէ բաւական ծախք կ'երթայ կոր նախնական դատարանին համար, «Դուն լուքքէն մի՛ խառնուիր» ըսաւ, և այն ատեն ահա դատը կորսնցուցինք. արդ կարծեմ աւելորդ պահանջք մը չէ ըրածս, երկու հազար ոսկի. կը յուսամ թէ զղջացնել չը պիտի տաք զիս զձեզ պատուաւոր մարդ ճանչած ըլլալով՝ ծախուցս հատուցման համար մուրհակ առած չըլլալուս...։»

Արամ հաւատալ չէր ուզած իւր ականջներուն, բայց պէյը կրկնած ու դարձեալ կրկնած էր իւր խօսքը, «չորս հազար ոսկի», բարձրացած էին ձայներն երկուստեք եւ Արամ որ պէյին կարծեցեալ «և խարդախեալ» ծախուցն համար իւր հօր հինգ փարայ չը տալու գիտաւորութիւնները գիտէր, սպառնացեր էր իւր վաղեմի բարեկամին, որ արհամարհած էր զինք, եւ եւ այդ արհամարհանքը նախատանաց փոխուելով՝ հարկ էր եղած որ «ձաղկ»ին բուն մէջտեղը դուազան վերցնէին իրարու վրայ և զիրար դանակոծէին... Բայց պէյը Յակոբ էֆէնտիին հետ չէր «աւրուած» ընդհակառակն գացած էր իրեն ցանգատելու իւր զաւկէն, անոր հետ հաշտուելու միջոց մը գտնելու համար։ Յակոբ էֆէնտին պէյին իրեն դիմելէն առաջ լսելով անոր եւ զաւկին մէջ տեղի ունեցած գայթակղական դէպքը, չո՛ւտ Գալուստ աղան տուն կանչած էր իմանալու համար ամեն բան. գացած էր նախապետեանց արկղակալը, բայց կաթուածահար գտեր էր արդէն հէգ Յակոբ էֆէնտին իւր եօթանասուն եւ հինգ հազար ոսկւոյ ագարակի կորստեան հարուածին տակ. նշանացի հարցուցած էր նա իրեն պանքային վիճակը եւ Արամի ու պէյին կռուոյն չարժառիթը, դողդոջուն խոստովանած էր ինք ամեն բան եւ այն ատեն Յակոբ էֆէնտին անբացատրելի վրդովման մ'էր մտնուած. «խե՜ղճ էֆէնտին». ինքն ալ, Գալուստ աղան, չատ յուզուեր էր եւ հետեւեալ առաւօտուն դրամատուն վերադառնալով երբ կը մտածէր վճարումներն հատուցանելու համար (զի նորանոր առեւտրական ձախող գործոց ձեռնարկած էին) արտաքոյ կարգի միջոցի մը դիմել, այլոց աւանդն ուրիշի քով աւանդ թողուլ մտածել տան պատիւը փրկելու համար, Արամի երկու չէքերը ներկայացուցած էին ահա Տըմիւթիի եւ Լըտիւքի գործակատարներն, ի հատուցումն այն ամեն առարկայից զորս գնած էր նա իւր հոմանուհւոյն համար. եւ այս անգամ այլ եւս ինքզինքէն դուրս ելած՝ Գալուստ աղան, ուղղակի Արամի խուցն երթալով դրամարկղին բանալիներն ու չէքերն անոր առջեւ նետելով գոչած էր. «Առէք այս բանալիները. ես ձեր հօր քով տասն եւ եօթն տարի ծառայեցի յետոյ, այս բանալիներով չեմ կրնար սնտուկը բանալ ձեր հոմանուհւոյն ծախքերը վճարելու համար. երբ բաւական դրամ չունինք մեր վճարումներն ընելու եւ երբ դրամատան պատիւը փրկելու համար գլուխս կը պայթեցնեմ, դուք վատ կիներու դրպանը լեցնել կ'ուզէք ձեր հայրութիւնը զոր փճացնելու մօտ էք. առէք, բաւական համբերեցի այն ամեն նողկալի արարքներուն որք աչքիս առջեւ դարձան, առէք, էֆէնտի, այլ եւս ձեր հօր նախկին հաւատարիմ ծառայն հոս գործ չունի...։»

Եւ Գալուստ աղան մեկնած էր Արամի հայհոյանաց տակ, եւ ահաւասիկ ինչու համար կ'ըսէր այժմ Գարեգինի սլըտմաքին թէ «վկայական չունէր, վկայական չը պիտի ունենար», վասն զի այլ եւս «Արամի երեսը չէր կրնար նայիլ։»

ԽԸ

Հոկտեմբերի վերջերն է. ոչ եւս քաղցրասիւք զեփիւռը կուգայ չոյել փթթինազարդ ծաղիկներն. հողմն է այժմ սաստկամռունչ որ խլել, թօթափել կուգայ ծառոց ու տնկոց թօշնեալ տերեւներն ու խառնել զայնս փոշեյոյզ մթնոլորտին հետ. Թռչնիկք ոչ եւս կը ճռուողեն ծառերու մերկ ոստերուն վրայ. իրենց դայլայլովը մրցիլ ուզած էին ամարողներու խրախալից ձայներուն, երգերուն հետ, եւ հիմա անոնց մեկնման հետ չուել կը թուին եւ իրենք. կ'ամայանայ Մալթէփէ, այլ բարեբաղդաբար վարժապետին ընտանիքն յարաբերութիւն հաստատած չէ ամարող ընտանեաց եւ ոչ միայն հետ անոնց մեկնումովը տխրելու համար։ Բայց հէգ Սրբուհի հանըմին համար միշտ տխրելու առիթ կայ. կը տեսնէ ամեն օր պարտանդեալ կարասիները զորս ժիր յոյն լուսոր կայարան կը փոխադրէ, ընտանիք մ'աւելի կ'իջնէ այդ օր, ու ինչ ցնծութեամբ, աշխուժիւ կը դիմեն ի կայարան, ընկերացեալ իրենց բարեկամ ընտանիքներէ որք կուգան ըստ կարգի ողջերթ մաղթել իրենց, սեղմել աջն ապաքինեալ հիւանդին ու անոր գունագեղ ու գիրացեալ դէմքին մասներու ապտակիկներ տալ մտերմաբար. կը տեսնէ Սրբուհի հանըմը այդ կազդուրեալ հիւանդներն եւ ամեն օր, մինչ Աստղիկ որ գարնան ծաղկին հետ չէ փթթած այլ աշնան տերեւին հետ կը թառամի, կ'ըսէր իրեն այս առաւօտ եւ առաջին անգամ. «Մայրիկ, ուսերուս տակ չատ կը ցաւի՛ կոր...։»

Այդ աշնան օրերուն մէջ չեմ գիտեր ի՛նչ կայ մելամաղձիկ. չոգեկառքին սուլիչն իսկ տխուր կը հնչէ, կարծես կը ճչէ գանգատելով այն խուլան, դալարաղուրկ դաշտերէն ընդ որս կ'ընթանայ անվաստակ. ոչ եւս մայիսի սրաձայն եւ բերկրաձայն սուլիչն, որ նոր հիւրի մը գալուստը կ'աւետէր ամեն օր. ա՛հ, համակ երաժշտութիւն մ'է լսել այդ սուլիչ. բայց այժմ տօքթէօր Սեպուհի գալուստն է միայն որ կ'ազդարարէ այն. ամեն չորեքշաբթի եւ ուրբաթ միջօրէի կառախումբով է որ կը հասնի նա, տօքթէօրն, որուն միշտ անհամբեր ու սրտատրոփ կ'սպասէ մայրը. գիտէ՞ք ինչ պիտի ըսէ իրեն այս օր. «Երէկ գիշեր դեռ սոսկալի դող մը, դող մ'ունեցաւ, չատ վախցայ, տօքթէ՛օր. բնաւ այսպէս եղած չունէր...» կ'սպասէ անհամբեր, եւ ահա տեսաւ իւր պըղտոր աչքերովն տակէն տօքթէօր Սեպուհին չափազանց երկար գլխարկն որ հեռուէն իւր մարմինէն առաջ կը նշմարուի, ինչպէս հասնող նաւու մը կայմերն հորիզոնին վրայ, եւ Աստղիկի քով ելնելէ առաջ Սուրբիկ հանըմ բակը կը պատմէ միշտ իրեն միեւնոյն պատմութիւնն. «Հազը սաստկացաւ, ուսերուն ցաւն անտանելի դարձած են, դողըշացած է.» վեր կ'ելնէ բժիշկն հիւանդին քով, կը քննէ, կը զննէ, դեղերը կը փոխէ անդադար. Աստղիկ օր մը գանգատած չէ Տօքթէօր Սեպուհէն իբր բժիշկէ մը որ չը կրնար առողջացնել զինք. բայց այդ օր միայն երբ մայրը վայրկեան մը զինք առանձին կը թողու, կ'ըսէ. «տօքթէ՛օր, աղէկցուր զիս; մօրս համար աղէկցուր զիս, չատ նեղացայ...» եւ տօքթէօրն յուսադրիչ խօսքեր կ'ընէ. «բայց տարակոյս չկայ որ պիտի աղէկնաք, տիկին, մասնաւոր հիւանդութիւն մը չունիք, տկարութիւն մ'է միայն որ կը յամէր կոր,—եւ յաւելցուցած է զուարճաբանելով,—էհ, եթէ քիչ մը նիհարցած էք փոյթ չէ, աւելի չէ՞ է։

Կը ժպտի Աստղիկ եւ կը խնդրէ իւր բժիշկէն որ քիչ մը նուազ դառն դեղեր տայ իրեն. չատ լեղի էր վերջին դեղը. Տօքթէօր Սեպուհ գրած է արդէն դեղագիր մը, բայց աճապարանօք կը փութայ ուրիշ մը տալ. կը հանէ թղթապանակը կը դնէ ծնկան մը վրայ, թուղթ մը կը քաշէ անկէ. բայց հարկ էր չուտ գրել, Թարթալի կառախումբն է որ կը սուլէ կը հասնի. սպառա՛ծ է, կ'երկարէ զայն Սուրբիկ հանըմի որ ներս մտած է այժմ եւ հազիւ «մնաք բարով» մը կարենալով մրմնջել, կը յարձակի գլխարկին վրայ ու կը մեկնի աճապարանօք։

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ
(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎ

ՑԱՆԿ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐԵԼԵԱՑ

Եկեղեցական Համագումար Ժողովն երէկ ի նիստ գումարեցաւ ի Պատրիարքարան, ընդ նախագահութեամբ Պատրիարքական Տեղապահ Գեր. Սիմէոն Սրբազանի և ատենապետութեամբ Գեր. Խորէն Նար-Պէյ Սրբազանի։

Ներկայ էին Ամեն. Խրիմեան Հայրիկ, Գեր. Ներսէս եպիսկոպոս Գէորգեան, Տիմոթէոս եպիսկոպոս Սափրիչեան, Փիլիպպոս եպիսկոպոս Նաճառեան, Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան եւ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանց, ինչպէս նաեւ մայրաքաղաքիս քարոզիչ վարդապետք, աւագերէցք և աթոռակալ քահանայք։

Ժողովոյ բացումը տեղի ունեցաւ սովորական աղօթիւք և յետ ատենական գործողութեանց կարդացուեցաւ Եպարքոսական Պույուրլթուն, որ կը հաստատէր պատրիարքական Տեղապահի ընտրութիւնն և կը յանձնարարէր ձեռնարկել պատրիարքական ընտրութեան։

Ապա ժողովը գաղտնի քուէարկութեամբ Թուրքիոյ եպիսկոպոսաց հետեւեալ ցանկը պատրաստեց, իբր ընտրելի Կ. Պոլսոյ Պատրիարքական աթոռոյն։

Թիւ քուէարկողաց 45 քուէ

1.	Տ. Բարթողիմէոս Ս. Արքեպիսկ. Չամիչեան Առաջնորդ Պրուսայի	32
2.	Տ. Խորէն Ս. Արքեպ. Նար-Պէյ Քարոզիչ Պէշիքթաշի	22
3.	Տ. Խորէն Ս. Եպիս. Մխիթարեան Առաջնորդ Եդեսիոյ	22
4.	Տ. Մատթէոս Ս. Եպիս. Իզմիրլեան Առաջնորդ Եգիպտոսի	17
5.	Տ. Հմայեակ Ս. Եպիս. Դիմաքսեան Քարոզիչ Ենիգաբուի	15
6.	Տ. Մկրտիչ Ս. Արքեպ. Խրիմեան Նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ	13
6.	Տ. Սիմէոն Ս. Արքեպ. Սէֆէրեան Պատր. Տեղապահ Կ. Պոլսոյ	13
8.	Տ. Խորէն Ս. Եպիսկոպոս Աշըքեան Վանահայր Արմաշու	13
9.	Տ. Մեսրովբ Ս. Եպիսկ. Սուքիասեան Առաջնորդ Ա. Պոլսոյ	10
10.	Տ. Գրիգորիս Ս. Եպիսկ. Ալէաթճեան Պատր. Փոխան Տիգրանակերտի	9
11.	Տ. Տիմոթէոս Ս. Եպիսկ. Սափրիչեան	8
12.	Տ. Ստեփան Ս. Եպիսկ. Յովակիմեան Առաջնորդ Նիկոմիդիոյ	7
13.	Տ. Արիստակէս Ս. Արքեպիսկ. Դերձակեան Առաջնորդ Կարնոյ	6
14.	Տ. Գարեգին Ս. Եպիսկ. Սրուանձտեանց	6
15.	Տ. Ներսէս Ս. Եպիսկ. Գէորգեան Միաբան Ս. Երուսաղէմի	6
16.	Տ. Երեմիա Ս. Եպիսկ. Տ. Սահակեան Միաբան Ս. Երուսաղէմի	6
17.	Տ. Մամբրէ Ս. Եպիս. Մարկոսեան Միաբան Ս. Երուսաղէմի	6
18.	Տ. Յարութիւն Ս. Եպիս. Յովհաննէսեան Քարոզ. Ս. Կարապետ եկեղ. Սկիւ.	5
19.	Տ. Ղեւոնդ Ս. Եպիս. Շիշմանեան Առաջնորդ Բաբերդի	5
20.	Տ. Վահրամ Ս. Եպիս. Մանկունի Քարոզիչ Միջագիւղի	4
21.	Տ. Ստեփան Ս. Եպիս. Սանտալճեան Վանահ. Ս. Դանիէլ Վնք. Կեսարիոյ	4
22.	Տ. Պետրոս Ս. Եպիս. Թահմիզեան Առաջնորդ Սեբաստիոյ	4
23.	Տ. Եղնիկ Ս. Եպիս. Ապահունի Առաջնորդ Արաբկիրի	4
24.	Տ. Պօղոս Ս. Եպիս. Մելիքեան Վանահայր Լիմ անապատի	4
25.	Տ. Աստուածատուր Ս. Եպիս. Յովհաննէսեան Միաբան Ս. Երուսաղէմի	4
26.	Տ. Սահակ Ս. Եպիս. Խապայեան Լուսարարապետ Ս. Երուսաղէմի	4
27.	Տ. Յովհաննէս Ս. Եպիս. Աստուածատուրեան Առաջնորդ Բագրեւանդայ	2

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Քաղաքական Ժողովը վաղն ի նիստ պիտի գումարի ժամ 4 ին ի Խորհրդարան Ղալաթիոյ։ Սոյն նստին պիտի ներկայացուի Եկեղեցական Համագումար Ժողովոյ կողմէ պատրաստեալ Պատրիարքական ընտրելեաց ցանկն, որպէս զի Սահմանադրութեան Բ. յօդուածին տրամադրութեան համաձայն քննելէ յետոյ նշանակեալ ընտրելեաց ըստ քաղաքականին արժանաւորութիւնն, ամենէն աւելի արժանաւորներէն հինգ ընտրելի զատէ քուէից առաւելութեամբ և անոնց ցուցակը ներկայացնէ Ազգ. Ժողովոյ։

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կրօնական Ժողովն երէկ իւր սովորական նիստը կազմեց ընդ նախագահութեամբ Պատրիարքական Գեր. Տեղապահ Սրբազանին և ատենապետութեամբ Գեր. Խորէն Նար-Պէյ Սրբազանի։

Ժողովն ի մէջ այլոց զբաղեցաւ նաեւ հետեւեալ խնդիրներով.

Խօսնակի համար յանձնաժողով մը կազմեց որպէս զի քննէ և տեղեկագրէ այն պայմաններն որովք Նախորդ Կրօնական Ժողովն որոշած էր հրատարակել այդ հանդէսը։ Նոյնպէս որոշեց որ Խօսնակ արդի ձեւով շարունակուի հրատարակիլ մինչեւ որ յանձնաժողովն իւր տեղեկագիրը բերէ։

Ժողովն որոշեց հեռագրաւ Մալկարայէն մայրաքաղաքս կոչել Գեր. Աբրահամ եպիսկոպոսն, որպէս զի պէտք եղած հրահանգներն ստանալով Եոզղատ երթայ իբր հոգեւոր այցելու։ Ժողովն իւր այս որոշումն հաղորդեց նաեւ Սսոյ Ս. Կաթողիկոսին։

Կը լսենք թէ Կրօնական Ժողովն իւր երեկի նստին մէջ որոշեր է յանձնարարել Սրուանձտեանց Գեր. Գարեգին եպիսկոպոսին, որպէս զի ուսումնասիրելով Շահպազեան Յակոբ վարդապետի խնդրոյն վերաբերեալ բոլոր գրութիւնները, բերանացի տեղեկութիւններ տայ, որմէ յետոյ Շահպազեան վարդապետը Ժողովին պիտի կոչուի։

Տիկին Այվազեան, որ տարի մը Բարիզի նշանաւոր երաժշտագէտներէն Բրոֆ. Պառպոյի աշակերտելէ յետոյ երկու տարիէ ի վեր ի Բարիզ Երաժշտանոցի (Conservatoire) ընթացից կը հետեւէր, մայրաքաղաքս վերադարձած է։ Տիկին Այվազեան առաջին Հայուհին է, և թերեւս առաջին Արեւելուհին, որ կրցած է ընդունուիլ իբր աշակերտուհի Բարիզի Երաժշտանոցն, շնորհիւ իւր հեշտալուր ու յորդեալ ձայնին և երգելու տաղանդին, որ գնահատուած էր քննիչ նշանաւոր երաժշտագէտներէն։ Վերջին քննութեանց մէջ Տիկին Այվազեան շատ գնահատուեր է իւր քննիչներէն, որոցմէ Ամպրուազ Թոմա և Մասընէ մասնաւոր կերպով շնորհաւորեր են զինքը։ Կը լսենք թէ հայ արուեստագիտուհին խնդրուած է նուագահանդէս մը տալ Պարսից դեսպանատունն, ի լուր դեսպանական մարմնոյն։

Մանչըսդըրէն կը գրեն մեզ թէ Օր. Վիրգինէ Կիւմշեան այս տարի Արքունի Ակադեմիայի հարցաքննութենէն անցնելով ձայնական երգեցողութեան համար, մրցանակի արժանի եղող աշակերտուհեաց կարգին մէջ անցեր է նաեւ իւր անունն, ինչպէս ծանուցած են անգլիական լրագիրք։ Որչափ ծանօթ է մեզ, Օր. Վիրգինէ առաջին հայ օրիորդն է Անգլիոյ մէջ այդ մրցանաց մասնակցող և պսակաւոր եղող, ինչպէս եղած էր մինչեւ ցայսօր իւր նախընթաց ուսումնական կրթանաց մէջ։

Մրցանակի բաշխման հանդէսը պիտի կատարուի առաջիկայ հոկտեմբեր ամսոյն մէջ Մանչըսդըրի Քաղաքական Պալատը նոյն իսկ Քաղաքապետին ձեռօք։

* * *

Այս առթիւ նոյն թղթակիցը կը ծանուցանէ մեզ նաեւ թէ Մանչըսդըրի Հայ գաղթականութիւնն ի լուր մահուան Ֆրետերիք Գ. կայսեր Գերմանիոյ, հեռագիր մ'ուղղած լինելով ի Պերլին առ արտաքին գործոց Նախարարութիւնն, իբր ցաւակից մեծի կորստեանն զոր ըրաւ այդու գերմանական ազգն, վերջին օրերս փոխադարձ շնորհակալեաց նամակ մ'ընդուներ է Լոնտոնի գերմանական դեսպանին ձեռօք։

Զմիւռնիոյ լրագիրք կը ծանուցանեն թէ նախորդ շաբաթ տեղի ունեցեր է ի Կէօզ-Թէփէ, զինուորական բժիշկ Արամ էֆէնտիի ամուսնութիւնն ընդ Օր. Թագուհի Պուսլի, կնքահայրութեամբ Եահեա Հայաթի փաշայի։ Զմիւռնիոյ պահապան զօրաց հրամանատարն և զինուորական բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնատարք ներկայ գտնուեր են հարսանեաց հանդիսին։

ԱԶԳ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Խնամակալութիւնս պատիւ ունի ծանուցանել ազգիս հասարակութեան թէ Ազգ. Կեդր. Վարժարանի առաջին, երկրորդ եւ երրորդ դասարանները կազմուած լինելով, աշակերտիլ փափաքողք կը հրաւիրուին օգոստոս 1 էն սկսեալ շաբաթ եւ չորեքշաբթի օրերն առաւօտէն մինչեւ կէսօր ներկայանալ ի վարժարանն, արձանագրել տալու համար իրենց անուններն եւ ստանալու համար հարկ եղած տեղեկութիւնները։ Մուտից քննութիւնք պիտի կատարուին օգոստոս 26 ի ուրբաթ օրն, առաւօտեան ժամ 2 էն սկսեալ։ Դասախօսութիւնք պիտի սկսին Սեպտեմբեր 1 ին հինգշաբթի առաւօտ։ Իսկ արդէն ընդունուած աշակերտք կը հրաւիրուին օգոստոս 29 ի երկուշաբթի օրը ներկայանալ ի վարժարան, իրենց թոշակները վճարելու եւ նոր մուտից տոմս ստանալու համար։

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ
Ազգային Կեդր. Վարժարանի

ՄԱՍԻՍ
ԱՄՍԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

Հրատարակուեցաւ ՄԱՍԻՍի յուլիսի ամսաթերթն հետեւեալ բովանդակութեամբ.

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Ընտրութիւն պատրիարքական Տեղապահի. Երուսաղէմատուն և իւր խորհուրդները. ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԸՆՏՐԵԼԻՔ.
Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Առակաւոր աստեղագիտութիւն.
Յ. ՆՈՒՍՈՒՖԵԱՆ
ՆՇՄԱՐՔ. — Սէր, սանձանիչք սիրոյ.
ՔԵՐԹՈՒԱԾ. — Մահտեսի Տատ ամիրայ.
ՄԻՀՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —
ՄԵՐ ՄՏԵՐՄՆԵՐԸ. — Կատակերգութիւն Վ. ՍԱՐՏՈՒԻ.

Մասիս ամսաթերթը ձեռքէ կը ծախուի հատը 40 փարայի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Նէճմի Նշանգին մէքթուպճի անուանեցաւ նոյն Նշանգի թղթակցութեանց դիւանի նախորդ քարտուղար Շիւքրի պէյ։

Սուրիական Տրիպոլսոյ Նախնական դատարանի պատժական ճիւղին նախագահ անուանեցաւ Լազգիյէի Նախնական դատարանի պատժական ճիւղին նախագահ Նուրի էֆէնտի։

Պէյրութի Նախնական դատարանի պատժական ճիւղին նախագահ անուանեցաւ Սուրիական Տրիպոլսոյ Նախնական դատարանի պատժական ճիւղին նախագահ Արիֆ էֆէնտի։

Լազգիյէի Նախնական դատարանի պատժական ճիւղին նախագահ անուանեցաւ Պէյրութի Նախնական դատարանի պատժական ճիւղին նախագահ Խայր էֆէնտի։

Սանիյէի երկրորդ աստիճան տրուեցաւ Մուսուլի Մէքթուպճի Շաքիր էֆէնտիի։

Բալայի աստիճան՝ Հայֆայի (Սուրիա) մաքսային պաշտօնեայ Րէմզի էֆէնտիի։

Երկրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ արտաքին թղթակցութեանց քարտուղար Նաում էֆէնտիի։

Երրորդ կարգի Մէճիտիէ՝ Կիւմիւշ Սու հիւանդանոցին բժիշկներէն գնդապետ Թոտորի պէյի, արտաքին թղթակցութեանց դիւանի տնօրէն Մէհմէտ պէյի և Փորթուգալի ընդհանուր հիւպատոս Պ. տը Վայսի։

Չորրորդ կարգի Մէճիտիէ՝ արքունի փողերանոցի պաշտօնեաներէն Միւհէնտիսեան Յովհաննէս էֆէնտիի։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ

Գերմանական դեսպան Պ. տը Ռատովից երէկ առաւօտ Վառնայի շոգենաւով մայրաքաղաքս վերադարձաւ և ուղղակի Թարապիոյ ամարանոցը գնաց։

Արտաքին գործոց Նախարարութեան թարգման Միքայէլ էֆէնտի երէկ ի Թարապիա գերմանական դեսպանատունը գնաց և յանուն Վսեմ. Սայիտ փաշայի բարի գալուստ մաղթեց Պարոն Ռատովիցի։

Տր. Պիւշ, որ ի բացակայութեան Պ. տը Ռատովիցի, դեսպանատան գործերը կը վարէր փոխանորդաբար, այսօր կը մեկնի ի Ստոգհոլմ, իւր դեսպանական նոր պաշտօնին գլուխն անցնելու։

ՊԷԼՈՎԱ-ՎԱՔՐԷԼԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Բ. Դուռը, կըսէ Թարիք, տեղեկանալով որ Պուլկարք առանց կայս. կառավարութենէն արտօնութիւն ստանալու սկսած են շահագործել Պէլովա Վաքրէլի երկաթուղեաց գիծն, ազդարարած է պուլկարական կառավարութեան թէ իւր այս ընթացք խիստ անճահ է։

ՌԷԺԻՆ

Օսմ. Ռէժիի վարչութիւնը ծանուցած լինելով Բ. Դրան թէ այս տարի դարձեալ առանց արտօնագրի ծխախոտ մշակուած է այլեւայլ տեղեր, եպարքոսական հրամանաւ հեռագրական հրահանգ ղրկուեցաւ գաւառական իշխանութեանց, որպէս զի Իտարէի ժողովոց միջոցաւ պատրաստել տան ցուցակն այն ծխախոտոց որք առանց արտօնութեան մշակուած են և յետոյ անոնց բնաջնջման ձեռնարկեն։

ՊԷՐՈՒԹԻ ՆԱՒԱՀԱՆԳԻՍՏԸ

Պէյրութի Հատիգա էլ Ախպար լրագրոյն մէջ կը կարդանք.

«Պ. Մալէ, տնօրէն Օսմ. կայս. Պանքային Բարիզու վարչութեան, և Բէրթիլիս կոմս, արտօնատէր Պէրութ-Դամասկոսի կառուղւոյն շինութեան, հեռագրաւ ծանուցին կուսակալ Ալի փաշային թէ Պէրութի Նաւահանգստին շինութեան ընկերութիւնը կազմուած է, ի գլուխ ունենալով Պանք Օթթոմանի գլխաւոր բաժնետէրերը, Դամասկոսի կառուղւոյն արտօնատէրերը, Բարիզեան և Հոլանտական Պանքայներն և Քօնթուար տէսքօնթ դրամատունն։ Այս նոր ընկերութեան բաժնեթղթոց ստորագրման ցուցակներն արդէն ղրկուած էին Պէրութի կառուղւոյն օսմ. ընկերութեան տնօրէնութեան, ինչպէս նաեւ քաղաքիս երեւելեաց ոմանց, որք փութացին ստորագրուիլ։

«Ըստ որում այս ձեռնարկի գլուխ կեցող դրամատեարք, որք ի Բարիզ, դիւրաւ կրնան ստորագրուիլ ընկերութեան ամեն բաժնեթղթոց, մեր հայրենակիցք լաւ կ'ընեն բաժնեթղթոց ի հրապարակ հանման առիթէն օգուտ քաղել, վասն զի անգամ մը որ ստորագրութիւնը փակուի, բաժնեթղթոց գինը վրայ կը դնէ, որպէս դիւրին է գուշակել այս ձեռնարկի կարեւորութենէն ինչպէս և այն շահերէն զորս արտադրելու կոչուած է այն։»

ՊԱՊԱԿԱՆ ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

Պապը Պիոս Թ. պատուանշանը նուիրած է Այտընի նահանգին արտաքին յարաբերութեանց տնօրէն Արմենակ էֆէնտիի։

ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՃԱՌ

Ինչպէս արդէն ծանուցինք, Օսմանեան Փաստաբանական կաճառի վարչութիւնն, 1888—89 տարեշրջանին համար, հետեւեալ կերպիւ կազմուած է.

Պ. Ֆ. Ռոսօլացօ, Նախագահ. Մանեասզատէ Րէֆիգ պէյ, Փոխ-Նախագահ. Պ. Մ. Քարափօքիրոս, Գանձապետ և պատուոյ ատենադպիր. Յովհաննէս պէյ Ալըքսանեան, Յովսէփ էֆէնտի Երկանեան և Գէորգ էֆէնտի Մարտիրոսեան, անդամք։

Փաստաբանական կաճառն ի պաշտօնէ կը ծանուցանէ հասարակութեան թէ յուլիս 11/23 էն սկսեալ Վարչական Ժողովն ի նիստ պիտի գումարի ամեն երկուշաբթի, առաւօտեան ժամ 1 ½ ին (Թրքական) ի Ղալաթիա, Զինճիրլի խան, թիւ 2։

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ ՍՈՒԼԹԱՆԻՅԷ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Սուլթանիյէ վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսն երէկ կատարուեցաւ շքեղապէս ի ներկայութեան երեք հազարէ աւելի հանդիսականաց։

Հանդէսը տեղի ունեցաւ վարժարանի պարտիզին մէջ, որ վրաններով ծածկուած և դրօշակներով զարդարուած էր։ Հանդիսավայրին ճակատը դրուած էր կայս. Թուղրան և անոր տակ «Բատիշահըմ չօք եաշա» գեղագիր վերտառութիւնը, շրջապատեալ դրօշակներէ, օսմանեան մահիկներէ և զինանշաններէ։

Ժամը 6ին կայս. պալատան առաջին քարտուղար Վսեմ. Սիւրէյեա փաշա ժամանեց և աշակերտաց հաղորդեց վեհ. Սուլթանի կայս. բարեներն ու վարժարանի բարեկարգ վիճակին նկատմամբ Ն. Վեհափառութեան բարձր գոհունակութիւնը։

Ապա վարժարանին տնօրէն Իսմայիլ պէյ բանախօսութիւն մը ըրաւ, որում յաջորդեց մրցանակաց բաշխումն, որոյ միջոցին զինուորական նուագածուաց խումբ մը անընդհատ կը նուագէր։ Վկայական ստացող աշակերտաց մէջ առաջին եղաւ Բ. Դրան կայս. դիւանատան տնօրէն Հիւսէյին էֆէնտիի որդին Թէվֆիք պէյ։ Մրցանակաբաշխութիւնն աւարտեցաւ ժամ 8ին և կրթական նախարար Միւնիֆ փաշա բանախօսութիւն մ'ընելով փակեց հանդէսը։

Ներկայ էին Ներքին, Արտաքին, Կրթական և Էվգաֆի Վսեմ. Նախարարք, Պոլսոյ կեդրոնական հրամանատար Արիֆ փաշա, Կրէտէի նախորդ կուսակալ Քոստաքի փաշա, Մէարիֆի ժողովոյ Նախագահ Հայտար էֆէնտի, հեռագրական ու թղթատարական տնօրէն Հասան Ալի էֆէնտի և այլ քաղաքային ու զինուորական բարձրաստիճան պաշտօնատարք։

Ներկայք բոլորն ալ պատուասիրուեցան պաղպաղակներով և այլ զովարար ըմպելիներով։

Սիւրէյյա փաշա և Միւնիֆ փաշա, առաջնորդութեամբ տնօրէն Իսմայիլ պէյի, այցելեցին վարժարանին բոլոր յարկերն։

Այս տարի դպրութեանց վկայական ստացած են հետեւեալ աշակերտք.

Օսման Նուրի, Գաբրիէլ, Սաատ, Ճէվատ, Թէվֆիգ, Շինասի, Նախի, Մէհմէտ Նայի, Զահիտ, Նուրի, Ճէմալ, Էնվէր, Իհսան, Ճէմիլ, Ալի, Ճէմիլ, Մուզաֆֆէր, Ահմէտ, Թէվհիտ, Քէնան, Համիտ, Ֆէթթահ եւ Զիվէր էֆէնտիք։ Ասոնցմէ գիտութեանց վկայագիր ստացած են Ճէվատ, Թէվֆիգ, Մէհմէտ Նայի, Զահիտ, Էնվէր, Ճէմիլ, Ալի, Ճէմիլ, Մուզաֆֆէր եւ Համիտ էֆէնտիք։

Արտաքին գործոց նախարարութեան խորհրդական Վսեմ. Տահան էֆէնտիի նախագահութեամբ կազմեալ թղթատարական յանձնաժողովն իւր բանակցութիւններն աւարտելով, տեղեկագիրը մատոյց Բարձր. Մեծ-Եպարքոսին։

—Սպարապետի Դրան առողջապահական երկրորդ ճիւղին տնօրէնի պաշտօնն, որ Պէլիզար փաշայի մահուամբ թափուր մնացած էր, յանձնուած է նոյն ճիւղի օգնական տնօրէն գնդապետ Հալիմ պէյի, ում յաջորդած է Կիւմիւշ Սուի հիւանդանոցի բժիշկներէն տեղակալ գնդապետ Գաբրիէլ պէյ։

—Բերայի Նախնական դատարանի պատժական ճիւղին ընդհանուր դատախազի օգնական անուանուած է իրաւագիտական վարժարանի նախկին շրջանաւարտ եւ Եղեռնադատ ատենի քարտուղարներէն Նէշէթէրճեան Գաբրիէլ էֆէնտի։

—Ֆրանսական դեսպան Մոնդեպէլլօ կոմսն եւ աւստրիական դեսպանատան գործակատարն երէկ Բ. Դուռը գնացին եւ տեսակցեցան Բարձր. Մեծ Եպարքոսին հետ։

—Անգլ. Ծն. Մէսէնճըր շոգենաւն որ ուրբաթ իրիկուն մեկնած էր Պոլսոյ նաւահանգիստէն, այս շաբաթ գիշեր, Մարմարայի մէջ բաղխեցաւ հելլենական առագաստանաւու մը որ ապրանք բեռցած էր։ Առագաստանաւն ընկղմեցաւ իսկոյն և նաւաստիք որք տասն հոգի էին, ծովամոյն եղան. Նաւապետն ու ղեկավարը միայն յաջողած են ազատիլ։

Ընկղմեալ առագաստանաւուն նաւապետը դատ բացած է անգլ. շոգենաւուն տեարց՝ Կիլբրիտ Ե. Ուոլքըր ընկերութեան դէմ, մայրաքաղաքիս բրիտանական հիւպատոսարանին առջեւ։

—Այս առաւօտ Նիկոմիդիայէն խմբագրութեանս հասած նամակ մը կը ծանուցանէ թէ երէկ ժամը 6 ին Հայոց թաղը հրդեհ ծագելով, չորս տուն այրեր են։

—Երէկ Վառնայի շոգենաւով Եւրոպայէն մայրաքաղաքս հասաւ Պ. Քամիլ Քօլաս, տնօրէն օսմ. փարոսներու վարչութեան, ընկերակցութեամբ Պ. Պ. Բուլէրի, Պօնֆօնի, Մաքս Լիյոնի և Մանօյլօվիչի որք Անգլիական Պանգոյն իջեւանեցան։ Ինչպէս յայտնի է, Պ. Քօլասի գալստեան նպատակն է ասիական երկաթուղեաց շինութեան մենաշնորհը խնդրել։

—Շաբաթ օրը մեկնեցաւ մայրաքաղաքէս Արեւ. երկաթուղեաց ընկերութեան տնօրէններէն Պ. Կրօզօլձ յեւրոպա, ընդ առաջ իւր ընտանեաց։

—Քրէտի Լիոնէ դրամատունն երէկ իւր կեդրոնը փոխադրեց Հալաճեան խանին մէջ, որուն մեծագոյն մասը վարձած է։

—Անգլիացի Լուսինեան իշխանուհին Միտիլլէնէն մայրաքաղաքս եկաւ երէկ։

—Պուլկարիոյ ռուսասէր կուսակցութեան պետը, Պ. Տրական Ջանքոֆ, որ բաւական ժամանակէ հետէ մայրաքաղաքս հաստատուած էր, իւր դստեր ու փեսային ընկերակցութեամբ Քիէվ ուղեւորեցաւ ներկայ գտնուելու համար այն հանդէսներուն որք պիտի կատարուին այդ քաղաքին մէջ, ռուս ժողովրդեան օրթոտոքսութիւնն ընդունելու 900րդ տարեդարձին առթիւ։

—Կարեւոր դատ մը կը տեսնուի այս պահուս յԷքս։ Ահաւասիկ մի քանի ծանօթութիւնք այդ դատի վրայ։ 1860ին ընկերութիւն մը կազմուած էր Քօլաս, Միշէլ և Պօտուի տեարց միջեւ, օսմանեան փարոսներու շինութեան և շահագործման համար։ Պայմանագիրը կը տրամադրէր որ եթէ ընկերաց մին մեռնէր, ընկերութիւնն իւր գործառնութիւնները պիտի շարունակէր ցվերջ պայմանաժամին, վախճանեալ անդամին ժառանգորդաց հետ։ Երբ Պ. Պօտուի մեռաւ, իւր ժառանգորդք հաւանեցան որոշեալ գումարի մը փոխարէն հրաժարիլ իրենց գործակցութեան իրաւունքէն։ Սակայն այս համաձայնութիւն չեղեալ յայտարարուեցաւ Էքսի դատարանին կողմէ, ի նպաստ անչափահաս ժառանգորդաց Պօտուի։ Այժմ, չափահաս ժառանգորդք կը խնդրեն որ իրենց ի նպաստ եւս մի և նոյն վճիռը տրուի, բայց Կ. Պոլսոյ ֆրանսական հիւպատոսարանին առջեւ կորուսած են իրենց դատը։ Խնդիրը ներկայացուած է այժմ Էքսի դատարանին։ Բարիզի փաստաբաններէն Պ. Ֆալալչէօֆ ստանձնած է Պ. Պ. Միշէլ և Քօլասի իրաւանց պաշտպանութիւնն և Պ. Վիլլար՝ վախճանեալ Պօտուի չափահաս ժառանգորդաց փաստաբանութիւնը։ Այս դատ քանի մը նիստեր պիտի գրաւէ։

—Երկու շաբաթէ հետէ մայրաքաղաքիս մէջ տիրող կիզիչ տաքերը Փոքր Ասիոյ այլ և այլ քաղաքաց մէջ ևս զգացուած եւ բազում մահու պատճառած են։ Մանիսայի աւազուտ դաշտին մէջ երկու մարդ եւ մէկ տղայ մեռեր են արեւահարիկ։ Ուրեք ուրեք անասուններ սատկեր են եւ բանջարանոցներ ու այգիներ չորցեր են։ Գլխաւորապէս վնասուեր են Պոլէր-Օվասի, Վուրլայի, Կիւլ-Օվասի եւ Պունճայի գիւղօրէք։

Ադրիանուպոլսոյ մէջ եւս երեքշաբթի օրը մարդ մը մեռեր է արեգական ճառագայթից սաստկութենէն։

Պէյլիք-Չէքմէճէի մէջ մեռելոց թիւը չորսի կը հասնի եղեր։

Թեսալիայէն կ'իմանանք թէ Լարիսայի մէջ այն աստիճան սաստիկ տաքեր կ'ընեն որ քառասուն հոգի մեռեր են շնչահեղձ։

—Նախընթաց իրիկուն Բերա, Սարգիս փողոցը նկարիչ Ժոզէֆ Մանաս էֆէնտիի տունը գողեր մտնելով, 1000 ֆրանքի արժողութեամբ նիւթեր եւ հանդերձեղէն գողցան։ Տան սպասաւորն հարցաքննութեան ենթարկուած է։

—Անգլ. դեսպանատան պաշտօնեաներէն Պ. Թովըր շաբաթ օրը ծանր արկածի մը հանդիպեցաւ։ Ընկերոջ մը հետ երկանիւ կառքով մը պտոյտ կ'ընէր Քալէնտէրի կողմը, երբ կառքն անկարծ ճամբու մը վրայ գլորելով, երկու պարոնայք վար ինկան և Պ. Թովըր ծանրապէս վիրաւորեցաւ երեսէն։ Անմիջապէս պատգարակով Թարաբիոյ դեսպանատունը փոխադրուեցաւ, ուր բժշկաց խնամոց յանձնուած է։

—Հաքիքաթ կ'իմանայ թէ Գոնեայի ընդհանուր դատախազ Խասա էֆէնտի, տեղւոյն վերաքննիչ ատենի նախագահ Նիազի էֆէնտիի նկատմամբ անվայել ընթացից մէջ գտնուած լինելով, այս վերջինը բողոքեր է Դատական նախարարութեան, որ հարկ եղած քննութեանց ձեռնարկեր է։

—Պրուսայէն կը գրեն առ Հաքիքաթ թէ այս օրերս ժանտարմաներու և ոստիկաններու միջեւ իրաւասութեան խնդիր ծագած լինելով, այդ առթիւ առաջ եկած անտեղութիւնք աւելնալու վրայ են։

ԱՒՍՏՐԻՈ-ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԼՈՅՏԻ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱԶԴ

Աւստրեւհունգարական Լոյտի մայրաքաղաքիս Գլխաւոր Գործակալութիւնը պատիւ ունի ծանուցանել ազգիս հասարակութեան թէ հետեւեալ փոփոխութիւնները պիտի մուծուին վերջնապէս արդի երթեւեկութեանց մէջ՝ Կ. Պոլիս յանգող գծերուն համար։

Եգիպտոսի գիծը պիտի ջնջուի։

Այս շաբթուան Թրիէստի շոգենաւը տակաւին պիտի մեկնի ուրբաթ օր, ամսոյս 20ին, բայց այս շոգենաւուն յառաջիկայ մեկնումը պիտի լինի երկուշաբթի, յուլիս 23, երեկոյեան ժամ 4ին և այսպէս շարունակաբար ամեն շաբթու։

Թեսալիոյ համար շոգենաւը պիտի մեկնի ամեն երկու շաբաթը անգամ մը հինգշաբթի օր, երեկոյեան ժամ 4ին, սկսելով ներկայ յուլիս 26 հինգշաբթի օրէն։

Նախկին ուղեցոյցին մնացեալ մասն ըստ առաջնոյն նոյնութեամբ պահուած է։

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմել առ Գործակալս Աւստրեւհունգարական Լոյտի, Ղալաթիա, Մումհանէ, Լոյտ խան, կամ առ իւր Մասնաճիւղն ի Պոլիս, Պահչէ-Գաբու։ 1911

Կ. Պոլիս, 5/17 յուլիս 1888 1—1

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Կը ծանուցուի Համպուրկի Լօտըրիին տոմսերէն գնող անձանց թէ 31,640 թիւը 55,000 մարք շահեր է յուլիս 12 ի վիճակահանութեան մէջ։

Այդ գումարին գանձման համար դիմել առ Ժ. Տ. ՃԱՆԷԹԹՈՍ
Ղալաթիա, Գոմիսիոն խան, թիւ 18
1976

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 5 յուլիս

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

ամիս Լոնտրայի վրայ (պանքայի)	111
3 » » » (վճռականին)	110 5/8
3 Բարիզի » (պանքայի)	22 77½
3 » » » (վճռականին)	22 85

Օսմանեան Քոնսոլիտէ

		Դահեկան
Երեք երկրոյ գոց. (Միաց. Ս)	Սէրի	16 5
Պօրսային գոցուելէն վերջը	»	16 5
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	16 6
Բարձրագոյն գին	»	16 6
Նուաստագոյն »	»	16 5
Կէս օրին	»	16 5

ԻՍԹԻԳՐԱԶԸ ՏԱԽԻԼԻ

Երեք երկրոյ	36 7
Այս առաւօտ	36 5
Կէս օր	36 5

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

փոխառութիւն 1858) » 1862)	Ա Սէրի	24 30
» 1860) » 1863) » 1872)	Բ »	14 30
» 1865) » 1869) » 1873)	Գ »	16 6

ԲԱԺՆԵՏՈՄՍԻՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	Անգլ. Լր.	4 10
Քրէտի Ժէնէրալ	Օսմ. »	7 24
Պանք տը Գօնս	» »	6 8
Քօմ. Շանժ է վալէօր	» »	4 10
Թրամուէյ	»	490
Ռումէլի երկաթուղի	Ֆր.	42
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ	»	—
Բաժնեթուղթ Լաւրիոնի	»	118

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	ՂՐՇ.	100
20 ֆրանքնոց	»	88 13
Անգլիական ոսկի	»	111 2
Բօլ Իմփէրիալ	»	90 35
Քրիմից	»	51 15
Ռուսայի թղթադրամ	»	9 56
» արծաթ	»	74
Ֆիօրին	»	— —
Մէճ. արծ. (տարբ.)	»	108 7
Վեցնոց	»	103 15
Հինգնոց	»	103 15
Մէթալիք	»	102 30
Թասֆիյէ	»	18

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 16 յուլիս ժամ 5 վայր. 15 երկվ.

Անգլ. քոնսոլիտէ (գ.կ.)	99 11/16
Օսմ. » Սէրի Դ. բացուեցաւ	14 5/8
» » » գոցուեցաւ	14 5/8
» » » Ա.	24 1/2
» » » Բ.	14 7/8
» » » Գ.	14 1/2
Օթօման 1871	86 3/4
փոխառութիւն 1877	96 7/8
Պանք Օթօման	10 7/8
Ռուսական փոխառ. 1873	97 3/4
Եգիպտական միացեալ (ունիֆիէ)	84 1/8
» առանձն. (բրիվիլէժիէ)	101 5/8
Տայրա Սանիէ	79 1/8
Տօմանիալ (փոխառ. Ռօչիլտ)	100 1/2
Հունգարական պարտաթուղթ 4 %	— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ	25 462

Վիէննա, 16 Յուլիս ժամ 4 երկվ.

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	125
Օսմանեան երկաթուղի	20 70

Բարիզ, 16 Յուլիս ժամ 3 վայր. 45 երկվ.

Ֆրանսական Ռանթ 4 ½ %	106 70
» » 3 % գ. կ.	83 40

Օսմանեան քօնսօլիտէ Սէրի Դ. բացուեցաւ	14	75
» » » գոցուեցաւ	14	77 1/2
» » » Բ.	14	80
» » » Գ.	14	60
Օսմանեան երկաթուղի	41	75
» Լէժիի բաժնեթուղթք	501	25
Բանք Օթօման	526	25
Գրէտի Լիոնէ	580	
» Ֆօնսիէ	1340	
Բաժնետոմս Լինէի	1262	50
Սուէզի ջրանցք	2130	
Ռուսական 5 % 1877 ի	100	3/8
Իտալական Ռանթ	96	75
Սպանիական (արտաքին)	72	1/8
Եգիպտական միացեալ	426	75
Բրիօրիթէ Թիւրք	417	50
5 % Հելլենական	—	—
Չէք Լոնտրայի վրայ	25	29

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

ԹԵՂՈՒՏ, 2 յունիս

Հարկ կը համարիմ հրապարակ հանել Թեղուտ գիւղի ծածկեալ նեղութիւններ և վիճակն. Եօթ տարի է, որ Թեղուտ կը ծփի և չատ մօտ է անոր սուզիլն.

Շատերուն ծանօթ է Բաղիշու Թեղուտ գիւղի երկրաշարժն. Բոլոր գիւղն տակնուվրայ եղաւ 1881ին, և երբ ամենքն ալ ուզեցին կանգնել, Բաղիշու սովելոց մասնաճիւղը թող չտուաւ, ըսելով.— «Ձեր տներ կը շինենք, ձեզի կը յանձնենք, մինակ թէ դուք իրա՛րմ, պատեցէք ձեր փլած տներին»:

Այս խոստման վրայ Թեղուտցիք, երեք ամիս աշխատելէն յետոյ, ամենայն ինչ պատրաստեցին և կը սպասէին օգնութեան, ու այս անգամ Բաղիշու սովելոց մասնաճիւղն ըսաւ.— «Ձեր տներ դուք շինեցէք, ստակը յետոյ կուտանք մենք. վեց հազար ռուբլի եկեր է և բաժնելու հրաման առնելու ալ է, ձեզի կը բաժնենք այս գումարն»:

Թեղուտցիք սիրտ առին այս յետին խոստմամբ և, իրենց փլած տները կառուցանելու համար, պարտքեր ըրին. Թեղուտցիք կը կարծէին, որ այս պարտքերը կը վճարուին խոստացեալ գումարով, բայց այս խոստումն չկատարուեցաւ, և իրենք մնացին վաշխառուներու անտանելի տոկոսներու տակ. 1884ին, ճարերնին հատնելով, Թեղուտցիք կրկին գաղթականութեան ձեռք զարկին՝ իրենց տներ և հողերը պարտքի տեղ թողլով, և կառավարութիւնը Մանձկերտէն ետ դարձուց զանոնք.

Թեղուտի արդի վիճակը անտանելի է. Տան մը վեց մարդերէն հինգը պանդուխտ են. չատ տուներ կան, ուր էրիկ մարդու ձայն չլսուիր, և կոյս աղջիկներն, իբրեւ մարդ, պանդխտութեան գնացած են, որ աշխատին և պարտք վճարեն(1). Աղջիկներ, հարսներ և կիներ կը մշակեն հիմա Թեղուտի արտերն, և վաշխառուներն անոնց ըրած ցանքն ալ [illegible] ընելով, կնիկներէն և աղջիկներէն չատերն ալ, աւա՜ղ, դաւանափոխ կ'ըլլան նեղութեան պատճառաւ.

ՂԱԶԱՐ ՎՐԴ. ՓԱՄՓՈՒԽԵԱՆ
Վանահայր Թեղուտայ վանուց

ՆԱՄԱԿ ԲԵԴՐՍԲՈՒՐԿԷ

ԲԵԴՐՍԲՈՒՐԿ, 26 յունիս

Այս անցեալ մայիսի 8ին կայացած Հայոց ծխական ժողովն ընտրեալ եկեղեցական խորհրդի երկու անդամքը և մի երեցփոխանը անվաւեր համարուեցան Ներքին գործոց նախարարի հրամանաւ, ուստի 19ին սոյն ամսոյ կրկնուեցաւ յիշեալ ժողովը և բարեբաղդաբար ընտրուեցան դարձեալ նոյն իսկ անձինք որոնք ընտրուած էին նախընթաց ժողովովը բժիշկք Պ. Պ. Յարութիւնեանց և Վարդանեանց անդամք ու Պ. Թաղիանոսեանց երեցփոխ, իսկ փոխանդամք ընտրուեցան Պ. Պ. Տէր Սահակեան ու Սուլթանշահ. Այս վերջինս հայերէն խօսիլ չգիտէ, բայց վառվռուն երիտասարդ մ'է. Ինչ որ մնում է եկեղեցական խորհրդի անդամոց գործունէութեան մասին խօսելու թէ՛ նախընթաց տարեշրջաններում և թէ ներկայում, այսքանս միայն կ'ասեմ որ եկեղեցապատկան տունը տնտեսական կողմանէ անտանելի դրութեան մէջ է գտնվում, այնպէս որ տունը քարուքանդ ըլլալու վրայ է, նամանաւանդ գաւիթի մէջ տաճարի ետքը գտնուած մասը.

Անդամոց այդ անուշադրութեան բուն պատճառը դէպի եկեղեցական չահերը, նա է, որ իրենց մէջ անհամաձայնութիւն կը թագաւորէ անձնական խնդիրներու պատճառաւ. ո՛վ է դոցանից իրաւացի ո՛վ անիրաւացի՝ այդ թողնենք մի կողմ, միայն թէ ցանկալի էր որ մեր անդամք յանուն հայութեան և յօգուտ գործոց վերջ դնէին իրենց հակաճառութեանցը, թէ ոչ տխրալի հետեւանքի կարող ենք ականատես ըլլալ. Այս անուրանալի է որ մեր յարգելի անդամք կ'առնեն և գովեստի արժան գործեր և կը տան եկեղեցական գումարից աղքատաց օգնութիւն, ուսանողաց թոշակ, ուսումնաւարտողաց միանուագ դրամական օգնութիւն, մինչեւ անգամ մի քանի ուսանողաց եւ ճանապարհածախք ամառուան արձակուրդի ամիսներում իւրեանց հայրենիքը այցելելու, բայց տարաբախտաբար ափսո՛ս այդ բոլորը կ'առնեն ըստ մեծի մասին այն տեսակ անձանց, որք առանց այդ ևս ունին չափաւոր ապրուստի միջոց, կամ թէ անձանց, որոնք անամօթաբար հրապարակաւ կը հայհոյեն օտարազգիների ներկայութեամբ հայ ազգն անխտիր, ինչպէս քանիցս անգամ ես ինքս եմ լսած. Մի զարմանալի երեւոյթն ալ սա է որ այդ ազգահայհոյիչ երիտասարդները մինչեւ անգամ իրենք զիրենք ազգի գործիչ կ'անուանեն. այդ տեսակ գործիչների ազգին կամ թէ ազգային գործոց տուած վնասները թէ՛ բարոյական և թէ նիւթական աւելի զգալի են լինում հայութեան համար քան թէ նոցա տուած օգուտը.— օրինակի համար մայիսի 8 կայացած ծխական ժողովի անվաւեր համարուելու պատճառն ի՞նչ էր եթէ ոչ մի ինքնակոչ ազգային գործիչ-երիտասարդի անտեղի բանախօսութիւնը ժողովի մէջ.

Պ. Ս. Մ. Սանասարեանցի քառասնամեայ ազգային բարեգործական յոբելեանը տօնելու համար պատրաստութիւնք կը լինին.

Շուտով կը հրատարակուի Պ. Սիմէօն Գուլամիրեանցի ԱՐԱՔՍ հանդէսի երկրորդ հատորը բազմաթիւ պատկերներով.

ԵՐԵՒԱՆՑԻ ԳԵՎԻՆ

ԿԱՒԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Րաֆֆիի թաղման համար ընտրուած կարգադիր յանձնաժողովը իր համար անհրաժեշտ պարտք համարելով ներկայացնել հայ հասարակութեանը եղած ծախսերի հաշիւը, աւելորդ չէ համարում մի եւ նոյն ժամանակ մի ամփոփ տեղեկութիւն տալ յանձնաժողովի ծագման եւ գործունէութեան մասին. Ապրիլ 25-ին, առաւօտեան ժամը 7-ին, երբ իմացուեց տխրալի լուրը, հանգուցեալ մի քանի մտերիմ բարեկամները ու ծանօթները աճապարեցին գնալ նրա բնակարանը, ուր հանգուցեալի այրին համաձայնութեամբ անմիջապէս կնքվեցան նրա գրադարանը և այն սենեակները, որտեղ զետեղված էին գրքերը եւ թղթերը. Երեկոյեան, երբ հաւաքվեց արդէն աւելի բազմութիւն, ժողովը ազգային մեծ գրողի թաղումը արժանաւոր կերպով կատարելու համար, հարկ համարեց ընտրել մի կարգադիր յանձնաժողով. Այդտեղ հարց ծագեց թէ ինչ միջոցներով պէտք է հոգալ հանգուցեալի թաղման ծախսը, քանի որ յայտնի չէր ոչ ոքի՝ թողել է արդեօք հանգուցեալը որ եւ է կարողութիւն. Եղան զանազան առաջարկութիւններ ի թիւս որոց եւ հանգուցեալի հայրենակից մի քանի սալմաստեցի վաճառականների առաջարկութիւնը՝ թոյլ տալ իրանց ծախսով թաղել Րաֆֆիին. այս առաջարկութիւնը թէեւ ժողովն ընդունեց, բայց յանձնաժողովն անյարմար գտաւ իրագործել, որովհետեւ երկրորդ օրը, հանգուցեալի այրին փափագ յայտնեց որ իր ամուսինը Րաֆֆի իր աշխատանքով թաղվի. «Թո՛ղ, ասաց յարգելի այրին, գուցէ եւ առաջին անգամ հայերիս մէջ, հայ մատենագիրը թաղվի իր գրական վաստակով»: Յանձնաժողովը օրինակելի գտնելով այրու փափագը, վճռեց բուն թաղման վրայ լինելի ծախսը կատարել այրու հաշւով, իսկ միւս ծախսերը իր միջոցներով հոգալ. Ամբողջ ծախսն եղել է 495 րուբլի. դրանից բուն թաղման ծախս եղել 300 ր. 90 կ., իսկ ուրիշ ծախսեր այն է հեռագիրների, գերեզմանը զարդարելու, հոգեհանգստի եւ այլն, 194 ր. 10 կ. Այդ 495 րուբլին ստացել է յանձնաժողովը հետեւեալ կերպով 450 րուբլի պարտք է վեր առել իր անունով, 45 րուբլի ըստացել է Բագուից Արշակ-Նուրիի միջոցով. պարտք վեր առած 450 րուբլին հետեւեալ կերպով պէտք է վճարվի. յանձնաժողովը 300 ր. արժողութեամբ գրքեր է վեր առել հանգուցեալ Րաֆֆիի այրուց, բոլոր «Սամուէլ», որի ծախելուց պիտի գոյանայ այդ փողը եւ վճարվի պարտքը. Մնացած 150 րուբլին պիտի ծածկվի վաճառքի հանած Րաֆֆիի վիմագիր պատկերների ծախելուց (սեւ շրջանակով ծախվում է 1 րուբլիով). Եւ եթէ դարձեալ պակասորդ մնայ յանձնաժողովը մտադիր է դիմել այն յանձնաժողովին, որ ընտրվել է մահարձանի առիթով. Թէ վերոյիշեալ պատկերները և թէ «Սամուէլ» ծախվում է Պ. Նիկոլ Տատուրեանցի խանութում, Դվորցովայա փողոցի վրայ. Մանրամասն հաշիւը, ծախսերի բոլոր ապացուցագրերով, իւրաքանչիւր հայ կարող է տեսնել յանձնաժողովի անդամ՝ ծախսարար Ալէքսանդր Սանդրոսեանի մօտ.

—Մոսկվայից մեզ գրում են. «Այս տարի Լազարեան ճեմարանում քննութիւնները վերջացել են յունիսի 3-ին. Ը րդ դասարանի վեց աւարտող աշակերտներից երեքը հայ են եւ երեքը ռուս. Աւա հայ աշակերտների ազգանունները. Նիկողայոս Բերբերեանց, Նոր-Նախիջեւանցի, Էմմանուէլ Կոստանեանց, Նոր-Նախիջեւանցի Պաւղոս Մաղաթեանց, Դերբենդցի. Սրանցից երկրորդը՝ Պ. Կոստանեանց Լազար. ճեմարան մտնելու օրից մինչեւ ուսման ընթացքի աւարտելը, Նախակրթարանից մինչեւ Ը րդ դասարանը իւրաքանչիւր տարի առաջին առաջադէմ աշակերտներից մինն է եղել. Ի նկատի ունենալով նրա ազնիւ ընդունակութիւնը, ջանասիրութիւնը և գեղեցիկ վարքը, ճեմարանի մանկավարժական խորհուրդը, իր վերջին նիստում վճռել է տալ նրան իբրեւ պարգեւ մի ոսկէ մէդալ եւ Տուրգենեվի բոլոր գրուածները. Եւ այսպէս Պ. Կոստանեանց Լազար. ճեմարանի տարեգրերում մի քաղցր յիշատակ է թողնում ի խրախոյս յետագայ աշակերտներին. Թո՛ղ նոյն աջողութիւնը ուղեկից լինի նորան երիտասարդին համալսարանում եւ հասարակական կեանքում»:

—Մի հայ երիտասարդ, Եղիշէ Մաղաթեան, որը այս տարի աւարտել է իր ուսումը Մոսկվայի համալսարանի լեզուագիտական-պատմական բաժնում, ուղարկել է մեզ հետեւեալ նիւթողութիւնը, տպագրելու համար. «Մի երկու—երեք ամիս սրանից առաջ Մոսկվայի պատմական մատենադարանում որոնելով հայերիս վերաբերեալ գրուածներ, ես գտայ մի ֆրանսերէն երկասիրութիւն հետեւեալ վերնագրով. «Estat présent de l'Arménie, tant pour le temporel que pour le spirituel, avec une description du pays et des moeurs de ceux qui l'habitent.» Գիրքը բաղկացած է 396 երեսից եւ տպված է Փարիզում Ժակ Լանգլուայի ձեռքով, 1694 թւին, ուրեմն հեղինակը մեր Զաքարիա Սարկաւագի ժամանակակիցն է եղել. Որքան կարելի էր ծանօթանալ նորա բովանդակութեանը մի ժամվայ ընթացքում, կարող եմ ասել որ դա մի նկարագիր է կաթոլիկ միսիոնէրների գործունէութեան Հայաստանում, կամ աւելի ճիշդ ասած՝ հայերի մէջ ընդհանրապէս. Առաջաբանում հեղինակը խոստանում է ճշմարտախօս լինել եւ հաստատել իր վկայութիւնները միսիօնէրների նամակներով. Այդ միսիոնէրներից նա յիշում է Samson անունով մէկին, որ մի քանի տարի մեծ եռանդով գործել է հայերի փրկութեան համար. Ցաւակցաբար ինձ միայն մի անգամ աջողվեց տեսնել այդ վերին աստիճանի հետաքրքրական աշխատութիւնը, որովհետեւ մօտ [illegible] գրքերի տեղափոխութեան պատճառաւ գրադարանը փակված մնաց մինչեւ իմ գալու օրերը Մոսկվայից. Ցանկալի կը լինէր, որ մայրաքաղաքում մշտապէս բնակութիւն ունեցող մեր ազգի բանասէրներից մէկը յանձն առնէր մանրամասն տեղեկութիւն տալ այդ հազուագիւտ գրքի բովանդակութեան մասին, որը, եթէ չենք սխալվում, դեռ եւս անյայտ է մեր պատմագէտներին»:

—Գանձակից մեզ գրում են. «Ամսիս 19—20, գիշերվայ ժամի երեքին, անձնասպանութիւն գործեց տեղիս վաճառական Ա. Մ. Անձնասպանը ոչ մի նամակ չէ թողել, եւ այդպիսով յայտնի չէ անձնասպանութեան պատճառը. Շատերը կարծում են որ առեւտրի անյաջողութիւնից է»: (Մշակ)

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ԳԱՄԱՐԱՆ ԿՂԶԻ (ԿԱՐՄԻՐ ԾՈՎ)

Ա.

ԳԱՄԱՐԱՆ, 11 յունիս

Ինչպէս որ Արեւելքի միջոցաւ ժամանակին յիշատակուած էր առժամեայ պաշտօնով տեղս ուղեւորիլս, անցեալ փետրվար ամսոյ 17ին չորեքշաբթի օրն եգիպտական Շարքիէ շոգենաւով Պոլսոյ հրաժեշտ տալով՝ հետեւեալ առաւօտ խիստ ցուրտ և սաստիկ ձիւնոտ օդով մը Դարդանէլ հանդիպեցանք, ուստից շուտ մեկնելով՝ նոյն երեկոյ Միտիլլի և գիշերն Զմիւռնիա և շաբաթ առաւօտ Պիրէոն և երկուշաբթի առաւօտ Աղեքսանդրիա հասանք ըստ մեծի մասին յուզեալ և ալեծածան ծովով ճամբորդութենէ մի ետք. Սոյն հանդիպած տեղեացս վերայ պատմական և գիտական մանրամասն տեղեկութիւններ տալն աւելորդ կը համարիմ, զի աւելի՛ ձեռնհաս անձինք պատեհ առիթներու մէջ սոյն աշխատութիւնն արդէն ի գործ դրած են. սակայն Աղեքսանդրիոյ մասին քանի մը խօսք ըսել պարտք կը դատիմ. աստ ջերմութեան աստիճանին մեծ տարբերութեան պատճառաւ ձմեռնային հանդերձներն կրել այլ ևս անհանդուրժելի էր. Սոյն քաղաք զոր ութ տարի յառաջ վերջին անգամ տեսնելու պատեհութիւնն ունեցած էի և որ այն թուականէն ի վեր մեծ յեղափոխութիւններ կրած էր, ո՛չ թէ միայն սոցա նշոյլն անգամ չէր մնացած, այլ նորանոր բարձրաբերձ և խիստ հոյակապ շէնքերով ճոխացած և զարդարուած էր Մեծն Աղեքսանդրի այդ պերճ եւ դարաւոր յիշատակն. Փետրվար 24 չորեքշաբթի առաւօտ սոյն պատմական ոստանէն շոգեկառքով մեկնելով և Պէնհա և Զագազիկ կայարանները կառախումբ փոխելով և 21 այլ և այլ կայարաններ հանդիպելով գիշերուան ժամ մէկին հասանք ի Սուէզ, հինն Արսինօէ, որ Ստորին Եգիպտոսի մի քաղաքն է Կարմիր ծովուն վրայ, սոյն ծովն Միջերկրականին հետ խառնող ջրանցքին բերանը, որում Սուէզի ջրանցք անունը տրուած է.

Ձմեռնային այդ եղանակին մէջ երբ մարդ շոգեկառքին երկու կողմն կը տեսնէ արմաւենեաց և այլևայլ բուսոց և տնկոց կանաչազարդ յանատարած դաշտերն, անկարագրելի է իւր զգացած հաճոյքն, երբ յիշէ մանաւանդ թէ շաբաթ մի յառաջ դառնաշունչ ձմեռուան մի տխրագեղեցիկ տեսարանին ևս հանդիսատես եղած է. Ներուի ինձ այստեղ պահ մը շեղիլ պատմութենէս. այդ եղանակին մէջ երբ բնութիւնն երկրագնդիս այլևայլ մասերուն վրայ բարեխառն ջերմութիւն մի կը տարածէ, պէտք չէ՞ որ մարդիկ բնութեան ձայնին հետևելով՝ թողուն քանի մը ամսուան համար իրենց ցուրտ կլիման և երթան բնակիլ այսպիսի բարեխառն կլիմայից տակ ՚ւ հրճուին ի հոգւոյ ՚ւ ի մարմին. բայց ի՜նչ կ'ըսեմ, միթէ ամէն մարդու տրուած է տեղափոխութեան այդ դիւրութիւնն, այն է դրամական լայն կացութիւնն. այսու ամենայնիւ՝ ի՞նչ ըսելու է այն մեր Պոլսեցի թէ կարող և թէ մեծափարթամ ազգայնոց, որք նախապատիւ կը համարին իրենց մամոնայն պաշտել միայն և չմտածելով առողջական վիճակնին՝ ցուրտ և խոնաւ ձմեռուան մի վնասակար ազդեցութեան փոխանակն կ'ենթարկեն թէ՛ իրենց և թէ ընտանիքներուն թանկագին կեանքն. ընդ հակառակն՝ օտարազգի հարուստք աշխարհիս ամէն կողմէն և մինչեւ անգամ Ամերիկայէն կը ճանապարհորդեն ձմեռուան եղանակն այսպիսի տաք կլիմաներու տակ անցունելու համար. Արեւելքի մէջ միայն Եգիպտոս և Քորֆու և այլն պէս տեղեաց պանդոկք և տունք լիապատար լեցուած են ձմեռները այնպիսի զբօսաշրջիկներով, որք կրկնակի կը չահին. Նախ՝ առողջութիւննին չվտանգելով և պահպանելով ձմեռուան վնասաբեր ազդեցութենէն, և երկրորդ՝ թերեւս բժշկի և դեղարանի տալիք դրամնին և ցրտէն պատսպարման համար ընելիք այլ և այլ անհրաժեշտ ծախքերնին.

Թողումք այս կէտն և շարունակեմք ճամբորդութեանս նկարագրութիւններն. ո՛րչափ որ հեշտալի և զմայլելի է տեսնել դաշտաց այդ կանաչագեղ զարդն, զոր վերը նկարագրեցի, ա՛յնչափ տխուր և սրտաբեկ է տեսնել Ապու Համար անուն կայարանէն սկսեալ չոր և ցամաք աւազուտ անապատ մի տեսարանն աչաց առջեւ հետզհետէ պարզուելն մինչեւ ի Սուէզ.

Եգիպտական շոգենաւուց Կարմիր ծովու հնգեւտասնօրեայ գծին շոգենաւերէն Նէճտ անուն շոգենաւով Սուէզէն մեկնեցայ 26 փետրվար ուրբաթ ցերեկ. Սոյն շոգենաւուն մէջ ինձ հետ ուղեկից էր Սուաքինի անդլիացի կառավարիչ Վսեմ. Քիչըներ փաշան, որ Սուտանցւոց հետ կռուի մի մէջ հրացանի հարուած մի ընդունած և գնտակը ծոծրակէն մտնելով կոկորդին բերանը մնացած ըլլալուն պատճառաւ Եգիպտոս ուղեւորած էր դարմանուելու համար. գնտակը վերջապէս ստամոքսն իջնալով աղեաց միջոցաւ դուրս ելած և վէրքը գոցուած ըլլալուն իւր պաշտօնատեղին կը վերադառնար. սոյն վէրքը ծոծրակին շարժման մէջ թեթեւ կարկամութիւն մի ձգած էր. Իրեն կ'ընկերանար անգլիացի երիտասարդ պաշտօնակալ մի, որ զինուորական բարձր պաշտօն մի կոչուած էր. քաղցր տպաւորութիւն մի թողած է յիս սոյն երկու ազնիւ անձանց ծանօթութիւնը, զոր վայելեցի մինչեւ Սուաքին. Ճիտտէի նաւահանգիստը մտանք երկուշաբթի առաւօտ, ուստից հետեւեալ օրը 1 մարտ երեկոյ ճամբայ ելնելով՝ 24 ժամէն Սուաքին ժամանեցինք, ուր երկու օր դադար ունեցանք. Չեմ կրնար լռութեամբ անցնիլ աստ այն անհուն բերկրութիւնն, զոր զգացի Ափրիկէի սոյն խորշին մէջ ծանօթանալով երկու ազնուաբարոյ հայազգեաց, ո՛ր է՝ Մարտիկ էֆէնտի Հիւնքեարպէյէնտեան և Սիմոն էֆէնտի Պուչագճեան, որք տեղւոյն հեռագրատան՝ որ օսմանեան է միայն, պաշտօնակալքն են. առաջինն պետն է կայարանին. սոյն հեռագրատուն Ճիտտէի հետ միայն կը հաղորդակցի և ուրիշ երկրաց համար առնուած հեռագրերն տեղւոյն անգլիական Ընկերութեան կայարանին յանձնելու համար միջնորդ մի է միայն. Իրենց անդ անցուցած կեանքն աննախանձելի վիճակ մի ունի. Սոյն քաղաք ապստամբ Սուտանցւոց [illegible] յարձակմանց ենթակայ ըլլալուն՝ պանական երկիւղն և կենաց ամենօրեայ վտանգն անհանդուրժելի եղած է, խիստ յուսալի է թէ նոցա սոյն անձնանուէր ծառայութիւն Օսմ. արդարասէր կառավարութենէն գնահատ ուելով՝ լիուլի պիտի վարձատրուի.

Երկու օրէ վերջ 4 մարտ ուրբաթ առաւօտ հրաժեշտ տուի սոյն երկու ազնիւ նորածանօթից և հետեւեալ օրն Մասուա հասայ.

Սոյն քաղաք որ քանի մը տարի յառաջ եգիպտական կառավարութեան կը վերաբերէր՝ այժմ բոլորովին կերպարանափոխ եղած էր. ամենուրեք իտալական դրօշը կը ծածանի և ամէն ինչ իտալական է, տուներէն աւելի զրահաւոր և անզրահ իտալական մարտանաւեր նաւահանգիստը գրաւած են. Մասուայի գրաւումէն ի վեր քաղաքին պաշտպանութեան մասին ռազմագիտական մեծածախ աշխատութիւններէն զատ քաղաքին բարւոքման ու բարեզարդութեան մասին ևս բաւական աշխատութիւններու ձեռնարկած են Իտալացիք, ինչպէս՝ ընդարձակ քարափ մը շինած են ծովեզրին երկայնութեան, մեծ պողոտաներն և կառավարական շէնքերն քարիւղի լապտերներով լուսավառած, ըմպելի ջուրն աղեհամ և լեղի ըլլալուն թորիչ մեքենայ մի հաստատած են, որոյ միջոցաւ արժան գնով խմելու ջուր կը մատակարարուի քաղաքացւոց. Նաև քանի մը ժամ հեռուն գտնուած անոյշ ջուրն խողովակներով քաղաք բերած են և այսպիսի տօթակէզ կլիմայի մը համար անհրաժեշտ եղած սառի մեքենայ մի առատ և թեթեւագին սառ կը հայթայթէ խնդրողաց. եգիպտական կառավարութեան ժամանակի կառավարական հոյակապ շէնքն սպայից երաստի (club) մի յատկացուցած են, ուր շաբաթը քանի մը գիշեր զինուորական նուագածուք մինչեւ կէս գիշեր այլեւայլ եղանակներով կը զբօսցունեն զօրքն և իրենց ընտանիքներըն. ըմպելեաց գներն յառաջապէս խիստ չափաւոր են. զինուորական չեղող անձանց համար թէև մուտքն արգիլեալ է, բայց սպայից միջոցաւ կրնայ տեղի ունենալ. Բարեպատեհ զուգադիպութեամբ մի տեղւոյն զինուորական հրամանատարին և այլոց ոմանց սպայից հրաւիրանօք՝ զոր անկնար էր մերժել, նոյն գիշեր երաստին մէջ պատուասիրեցայ թէև հակառակ սրտիս զգացմանց. բայց նուագարանն՝ ա՛ն է երաժշտութիւն՝ ինչպէս զուարթ սրտից, նոյն և թախծեալ սրտից համար պէտք մի է. միոյն զուարթութիւնն կ'աւելցունէ, իսկ միւսոյն թախծութիւնը կ'ամոքէ և կարծես հոգեզուարճ մխիթարութիւն մի կուտայ սրտաբեկ և անմխիթար սրտից. Գալով պատմութեանս թելին, 7 մարտ երկուշաբթի առաւօտ Մասուայէն ևս մեկնեցաւ շոգենաւն և հետեւեալ առաւօտ Հօտէյտայի նաւահանգիստն երկաթ նետեց. ասի էր վերջին նաւահանգիստն ուր պէտք է հրաժեշտ տալ շոգենաւուն. Հօտէյտայի մէջ առաջին անձն որոյ տեսութիւնն վայելեցի, մաքսատան վաճառացանկից (manifeste) պաշտօնակալ Մեծ. Տիգրան էֆէնտի Սեթեան էր, որ արդէն բազմաց ծանօթ է իւր գրական հրատարակութեամբք, զորս՝ ինչպէս նաև իւր նամակագրութիւններն ատենէ մը ի վեր դադրեցուցած լինելուն՝ իւր առողջական վիճակին վրայ այլևայլ կասկածներ յարուցանելու տեղի տուած էր. մի՞թէ այլեւս յոգնա՞ծ էր իւր գրիչ և հանգստեա՞ն պէտք ունէր. ո՛չ, ոչ, սիրտն էր որ կը տանջուէր և յակամայս դադարուած էր իւր գրչին գործածութենէն. գրիչն երբեմն սրտի ցաւերը կը նորոգէ. այդ ցաւերէն,—և ո՞վ է որ մեծ կամ փոքր ցաւ մը չունենայ այս ցաւոց աշխարհիս մէջ,—չունչ առնլու համար էր որ այլ ևս չէր գրեր. բայց երբ երկու վշտակիր և լքեալ սրտեր իրար կը բաղխին, հրաշէկին կայծքարի մի զարնուելուն նման կայծ մի դուրս կը ցայտէ, որ կ'արծարծէ այդ սրտերուն խանդն. ա՛յսպիսի ազդեցութիւն մը ըրած է կը յուսամ իւր վրայ իմ ներկայութիւնն, որովհետեւ անցեալ 1 ապրիլ թուակիր իւր մէկ պատասխանագրոյն մէջ կը գրէ ինձ թէ՝ «ո՞վ ղրկեց զձեզ մոռցնելու ինձ՝ ձեր անձնական և գրական ներկայութեամբ պանդխտութեանս դառն վիճակը. գուցէ նախախնամութիւն ալ մը, այնպէս չէ՞». Դժբաղդաբար չունիմ այն բանաստեղծական տաղանդն, որով նկարագրեմ սոյն բանաստեղծ ազնիւ բարեկամիս փոխադարձաբար իմ վրայ ըրած դիւթիչ տպաւորութիւնն, որ գէթ պահ մի դադարեցուց անգութ ճակատագրին դժնդակ մէկ հարուածին տակ ընկճեալ հեծեծանաց հառաչանքներն. խիստ քաղցր և անմոռանալի յիշատակ մի թողած է յիս իւր ցանկալի տեսութիւնն սոյն դառն նժդեհութեան մէջ. բայց աւա՜ղ, որ երեք օր միայն կրցի վայելել սոյն հաճոյքն. պէտք էր ժամ յառաջ աստ ի պաշտօնատեղիս գալ. Ծովային ճամբորդութենէն արդէն ձանձրացած, մանաւանդ առագաստանաւով ճամբորդել չուզելով՝ կառավարութեան կողմանէ տրուած եւ տաճիկ ուղտի (dromadaire) վերայ հեծած երկու արաբ ոստիկանաց առաջնորդութեամբ 11 մարտ ուրբաթ երեկոյ ցամաքէն ճամբայ ելայ աւանակով ըստ սովորութեան այս կողմերու. Սեթեան էֆէնտի և ուրիշ բարեկամ մի ժամէն աւելի տեղ ինձ ուղերթ մաղթելու եկան. Նոյն կէս գիշերուան մօտ Համարա անուն գիւղն հասնելով՝ անդ հանգչեցայ (պէտք է գիտնալ թէ այն կողմերն օրուան սաստիկ ջերմութեան պատճառաւ, գիշերները միայն կարելի է ճամբորդել) և հետեւեալ առաւօտ կանուխ անտի մեկնելով՝ քանի մը ժամէն Ուրճ անուն գիւղն եկայ, ուր ևս մինչեւ ցերեկէն վերջ հանգչելով՝ մեկնեցայ և գիշերուան ժամը մէկին կղզւոյս դիմացը Սէլիֆ անուն քանի մը հարիւր տնուոր գիւղն հասայ, ուր ևս գիշերելով՝ հետեւեալ օրը 13 մարտ կիրակի առաւօտ փոքրիկ առագաստանաւով մը կէս ժամէն վերջապէս տեղս ժամանեցի ողջամբ, 25 աւուր ձանձրանալի ճամբորդութենէ մի ետք. Սոյն վերջին ցամաքային ճամբորդութեանս մէջ նշանաւոր բան մի չկայ պատմելու. անհուն աւազուտ դաշտ մի անբարեբեր և անջրդի, չատ տեղ չորցած թուփերով ծածկուած, երբեմն ալ քանի մը կարճահասակ և փուշ արմաւենիներ կը տեսնուին. տեղ տեղ անհուն տարածութեան մը վրայ ծովու ջուրը տեղատուութենէն գոյացած աղերուն տեղերն, մանաւանդ գիշերուան լուսնին լուսովը ցոլացեալ, ձիւնապատ դաշտի մը համանման երեւոյթն ունի, բայց երբ ճամբորդը կը յիշէ թէ Արաբիոյ անապատին մէջ կը ճանապարհորդէ, ուր ձիւնն երբեք այցելած չէ, կը խնդաբեկի և այդ տեսարանին բուն պատճառը կը գուշակէ.

Գամարանի առողջապահական ատեանի
Յանձնաժողովին անդամ
ՏՕՔԹ. Յ. Ց. ՄԱԼԷՃԵԱՆ

---

(1) Տեր. Փոխանորդ Հայրն եւ Վսեմ. Նուբեան էֆէնտին իրենց քով կանչեցին անցեալներս Թեղուտի երկու բանուոր (ընկերք) աղջիկներ, եւ քիչ չատ օգնելով անոնց, խոստացան հայրենիք ղրկել զիրենք.

ԱԺԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՖՐԱՆՍԵՐԷՆԻ
Աշխատասիրեց՝ ԵՂԻԱԶԱՐ ՄՈՒՐԱՏԵԱՆ
ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Քննուած եւ խիստ ճոխացած Լարուսի ընթացքին վրայ
Գին 3 Ղրուշ

ՀԱՄԱՌՕՏ
ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ
ՔՆՆՈՒԱԾ ԵՒ ՍՐԲԱԳՐՈՒԱԾ
ԻՆՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Գին 2 Ղրուշ 1910

ԱԶԴ
ՕՍՄ. ԿԱՅՍ. ԲԱՆՔԱ

Կը ծանուցանէ հասարակութեան թէ կարող է Երկաթուղեաց յառաջիկայ վիճակահանութեան բաղդատոմսերէն գնել Օսմ. կայս. Բանքայի Ղալաթիոյ գրասենեակաց մէջ, ամեն օր, ժամ 10 էն մինչեւ 3 կ. (Ը. Ե).
1534

ԱԶԴ

Յառաջիկայ յուլիս 19ին և 20ին, այն է հինգշաբթի և ուրբաթ, տեղի պիտի ունենայ Պրուսէլի Մեծ Դեսուլեան Լոտերիին առաջին վիճակահանութիւնը.
Մէկ ութերորդ տոմսին գինն է 17 1/2 ղրշ.
Այս տոմսերէն ունենալ փափաքող անձինք պարտին ժամանակին դիմել առ Դրամատունն Ժ. Տ. ՇԱՆԷԹԹՈՅ
Ղալաթիա, Թոմիսոն խան, թիւ 18
1465 1—2

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵԹԵԱՆ
ՅՈՒԶՄԱՆ ԺԱՄԵՐ

Զանազան քերթուածներու հաւաքածոյ մ'է. կը ծախուի Պոլսոյ գրավաճառաց քով եւ Գրավաճառ Պօղոս եւ Յակոբ աղաներու խանութը եւ Կալ. թա՛ Վորմէլ Թղթավաճառանոցն, ի գին 10 ղրուշ.
Կեդրոնատեղին է Ն. Պէրպէրեան սպառանը. 1879 4—4

ՏԻԳՐԱՆ Ս. ՇԱԼՃԵԱՆ
ԴԱՍԱՏՈՒ ՀԱՅ. ԵՒ ՖՐԱՆՍ. ԼԵԶՈՒԱՑ

Կը փափաքի այցելութեամբ մասնաւոր դասեր տալ պատուաւոր ընտանեաց մէջ. ԽԻՍՏ ԴԻՒՐՈՒՍՈՅՑ ՄԵԹՈՏ. ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ. Նամակք պէտք է ուղղուին «փօսթայի» միջոցաւ ի Վոսփոր. Ենի-Մահալլէ,
Առ Տ. Ս. Շալճեան (դասատու)
1832 10—10

ՍԴՈԴԻ ՄՈՐԻՍ ՁԿԱՆ ՕՇԱՐԱԿ
Ֆլորենծա, 16 յուլիս 1885

Պարոնայք Սդոդ և Պոուն,

Ստորագրեալս, ուսուցիչ ազատ բժիշկ Ֆլորենծայի բարձրագոյն ուսմանց Արքայական կաճառին մէջ, կը յայտարարեմ թէ գործածած է Պ. Պ. Սդոդի և Պոունի պատրաստած Մորիս ձկան իւղի Օշարակն, և տղայոց համար դիւրագործածելի և դիւրամարս գտած է զայն:

Կը յայտարարեմ նաև թէ օգտակար գտած եմ զայն ճղճղածութեան և խուլի մէջ. Առ այս կ'ստորագրեմ. Դ. ԲԻԵՏՐՕ ՉԵԼՈՆԻ
1691 [illegible]

ԻԼԱՆ
ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻՅԷ

Ծումա վէ բազարտան մաադա կիւնլէրտէ սապահլայըն Եէնի Մահալլէտէն սահաթ օն իքիտէ հարաքէթ իտէն իքինճի վափուր Թէմուզուն իքինճի ճումա իրթէսի կիւնիւնտէն իթիպարէն Եէնի քէօյէ գատար օլան իսքէլէլէրէ օղրայարագ օրատա տիւքէր վափուր իլէ իսթիլալ կէլթիքտէն սոնրա տօղրու քէօփրիւյէ կէլէճէկտիր.

Բէզգալիք սապահլայը Պէյքօզտէն քէօփրիւյէ կէլմէք իւզրէ սահաթ օն իքիտէ հարաքէթ իտէն վափուր Թէմուզուն իքինճի ճումա իրթէսի կիւնիւնտէն իթիպարէն սահաթ օն իքիտէ չէյրէքտէ հարաքէթ իտէճէկտիր.

Բազար կիւնլէրի Պէյլէրպէյինտէն սահաթ իքի պուչուքտա Անատօլու ճիհէթինէ հարաքէթ իտէն վափուր Թէմուզուն իքինճի բազար կիւնիւնտէն իթիպարէն սահաթ իքի պուչուքտա օն տագիգա հարաքէթ իտէճէկտիր.

Սապահլարը Արնավուտ քէօյիւնտէն սահաթ օն իքիտէ օթուզ պէշ տագիգէ կէչէ րէք քէօփրիւյէ օլան րօսթա Թէմուզուն իքինճի կիւնիւնտէն իթիպարէն լաղվ օլունաճագը կիպի Թէմուզուն ալթըսընտան ճումա կիւնիւնտէն իթիպարէն սապահլարը քէօփրիւտէն սահաթ օն իքի պուչուքտա տօղրու Պէյքօզ օլան րօսթա ճումա կիւնլէրի իճրա օլունաճագտըր.

Թէմուզուն պիրինճի ճումա կիւնի աքշամ քէօփրիւտէն սահաթ օն իքի պուչուքտա տօղրու Պէյքօզա կիտէճէկ վափուր Պէյքօզտան սահաթ իքի պուչուքտա Օրթաքէօյ իսքէլէսինէ վէ քէօփրիւյէ կէլէճէկտիր. Վէ քէօփրիւտէն սահաթ օն իքիտէ Պէյքօզա կիտէճէկ վափուր Ծումա կիւնլէրի Պէյքօզտան Ծիրքէթի Խայրիյէ Իտարէսի թարաֆընտան իլան օլունուր.

1888 հազիրան 30 1688 2—3

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

531

ՆՈՐԹՀ ՊՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԵՐՔԸՆԹԱՅԼ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 6,243,127
ՀԱՍՈՅԹ 1887 ՏԱՐՒՈՅ 1,932,350

ՆՈՐԹՀԸՐԸՆ ԷՇՈՒՐԸՆՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 3,421,200
ՀԱՍՈՅԹ 1887 ՏԱՐՒՈՅ 946,800

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած դրամական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար զիրենք ներկայացնել. նաև իբր ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչեւ ցարդ տուած վնասնին 15,000,000 *Անգլիական Ոսկին կ'անցնի։*

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 500,000 — ՄԱՐԻԹԱՅՄ — ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 102,345

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամածրարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Գօմիսիօն խանի անկի նն երկաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ **ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ** *Գործակալ Կ. Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեանց։*

ԻԼԱՆ

ՊԱԶԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Էտիրնէ վիլայէթի տախիլինտէ պուլունաճագ ասաքիրը Շահանէ մուայեէնաթը իչին միւպայեա օլունաճագը էվվէլճէ իլան գըլընան էքմէք, լահմ վէ էրզագը սաիրէնին գարարը գաթիսինին իթասը իչուն թէմմուզը պուվինին օն պիրինճի բազար իրթեսի կիւնիւնէ թաալիգ խիլմիշ վէ իրթեսի կիւնիւ տախի թէգարրիւր իտէճէք ֆիյաթլարընտան եւզտէ պէշ թէնզիլի մուգարրէր պուլունմուշ օլտուղընտան, իթասընա թալիպ օլանլարըն մազգամը Սէրասքէրի լէվազըմաթը ումումիյէ տաիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

30 հազիրան 1888 — 1946
Նօ. 37 — 2—3

ԻԼԱՆ

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱՅԻ ՇԱՀԱՆԷ

Սէրայը Հիւմայուն էրզագ վէ հուպուպաթ անպարլարը իչիւն ալընաճագ միւթէնէվվի Մըսըր բիրինճի իլէ գաշգէ, չաիր, խուլաֆ վէ սամանըն գարարը գաթիսի թէմմուզը պուվինին ալթընճը չարշէնպիհ կիւնիւ վիրիլէճէկինտէն, թալիպ օլանլարըն եէվմը մէզքիւրտէ սաաթ ալթըտան նիհայէթ տօգուզա գատար Խազինէի Խասսայի Շահանէյէ կէլմէլէրի իլան օլունուր։

29 հազիրան 304
1504 — 3—3

ՖՐԷՏ. ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Այս կանոնաւորապէս կը բանին Լիվըրփուլի և Ալեքսանդրիոյ միջև.

Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ
Ալճէրիան	3500	Ֆլավեան	3700
Ալզաթիան	2500	Ֆլօրիտեան	3700
Անտալուզեան	2500	Ֆլօրեան	3700
Աթենեան	2500	Իպէրիան	5500
Արմէնեան	3700	Իլլիրիան	5500
Պավարիան	6000	Իսթրիան	5500
Պուլկարիան	6000	Լէսպիան	2200
Քասթիլեան	800	Լիպուրնեան	2500
Սայրէնեան	2000	Լիզպըն	800
Տուրօյ	700	Օփորթօ	700
Էճիփշըն	3700	Բէրսիան	3800
Ֆաբիան	3700	Վալէնսիան	6800
Ֆալէրնեան	3700	Վիրճինեան	6800

Սայրէնեան շոգենաւը, նաւապետ Տէյվիս յուլիս 2ին աստ կ'սպասուի.

Ֆլօրեան շոգենաւը, նաւապետ Ալէքսանդր, ընդհանուր վաճառքով Լիվըրփուլէն աստ հասաւ։

Լէսպիան, շոգենաւը, նաւապետ Էլիս, Օտեսայէն ամսոյս 7ին աստ վերադառնալով ուղղակի Լիվըրփուլի համար պիտի բեռնաւորի։

Ուղևորներու համար ամեն դիւրութիւն

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՑՈՒԱՐՏ ԼԱՖՕՆԹԷՆ
Գործակալ
Թիւ 1, Մէհմէտ Ալի փաշա խան, Ղալաթիա.

Նաւատէրք, Գարոնայք Ֆրէտ, Լէյլանտ և ընկ. Լիվըրփուլ

Գործակալութիւնք
Կ. Պոլիս, Էտուարտ Լաֆոնթէն.
Ճիպրալթար, Գ. Գ. Քարվըր Եղբարք
Աղեքսանդրիա, Կ. Լ. Վանհման և ընկ
Մալթա, Ա. Քամպիէրի.
Շիրա, Ս. Վօջօղօրուլօ Որդիք և ընկ
Զմիւռնիա, Գ. Ուիթտօլ և ընկ. 1498

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվըրփուլի և Միջերկրականի միջև բանող շոգենաւք

Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ
Քանոբուս	4200	Սֆինքս	3000
Թեբէս	4000	Օսայրիս	30
Օսմանլի	4000	Նեփթիս	3000
Սեսոստրիս	3250	Բէրա	3000
Թիպըր	3250	Լօգիւս	800
Մակալօ	3250	Օլինթա	800
Մարիօթիս	3250	Նիլ	70

Դիմել առ Ճ. Վ. ՎԻԹՕԼ և ԸՆԿ.
Ուիթալլ խան
ՃԷՅՄՍ ՄՕՍ և ԸՆԿ.
1891 — 31, Ճէյմս Սթրիթ, Լիվըրփուլ

Արտօնատէր — Օ. ՏԷՄԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

ՍԳՈԴԻ ՕՇԱՐԱԿ

(EMULSION SCOTT)

ՄՈՐՈՒԻ ՁԿԱՆ ՁՈՒԹԻՒՂ

Իբոֆօսֆիթ կրով և սօտայով

Պատրաստեալ ձեռամբ ՍԳՈԴԻ և ԲՕՈՒՆԻ, ի Նիւ-Եորք

Կաթին չափ ախորժահամ է.

Մորուի ձկան հասարակ իւղի բոլոր յատկութիւնն'ըն գտնուելով, իբոֆօսֆիթներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճռզածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, անուշ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն,

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։ Գործակալատունք են Համլէր և Հիրշէլ, Պոլիս։ 1691

La Compagnie d'Assurences La Mannheim
ET
La Compagnie de Ré-Assurances de Mannheim

Ի ՄԱՆՀԱՅՄ

ԸՆԴԴԷՄ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳԱՑ

Ամբողջ դրամագլուխ		12,500,000 Ֆրանք
Պահեստի	»	2,825,000 Ֆրանք

Կ'ապահովագրուին դրամ, թանկագին մետաղ, արժէթուղթ, գոհարեղէն ևն ապրանքներ, որք յանձնուած են ամենայն թղթատարական փոխադրութեանց կամ փոխադրութեան ընկերութեանց։

Վերոյիշեալ ապահովագրութիւնք կը կատարուին La Mannheim Cº d'Assurances et la Cie de Ré-Assurances de Mannheim *ընկերութեանց կողմէ որք ի միասին ունին* 30,500,000 *Ֆրանք։*

Կ'ապահովագրուին շոգենաւով, երկաթուղւով ու առագաստանաւով փոխադրուած ապրանքներ։

Գիները շատ չափաւոր են և պայմանները շատ ազատ։

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմել առ
Տ. ԼԸՊԷ ԵՒ ՎԻԴԴԸՐ ՈՐԴԻ
1132 — *Ընդհանուր Գործակալք են Կ. Պոլսոյ այս երկու Ընկերութեանց*

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

SOUTH BRITISH AND NATIONAL — ՍԱՈՒԹՀ ՊՐԻԹԻՇ ԷՆՏ ՆԷՅՇԸՆԸԼ

Ստորագրեալ դրամագլուխ	4,000,000	Անգլ. ոսկի
Պահեստի »	500,000	» »
1873էն ի վեր վճրլ. կորուստք	2,500,000	» »

GLASGOW & LONDON — ԿԼԱՍԿՕՈՒ ԷՆՏ ԼԸՆՏԸՆ

Դրամագլուխ **300,000** Անգլիական ոսկի

Թուրքիոյ համար ընդհանուր գործակալք ՀՈՓՄԱՆ ԵՂԲԱՐՔ ԵՒ ԸՆԿ.
(1880) — Պոլիս, Սուլթան Համամ, Սայտէ խան, թիւ 13, 14, 15

ՖՐԱՆՔՕ-ՀՕՆԿՐՈՒԱԶ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ Ի ՊԻՒՏԱԲԷՍԹ

ՀԱՆԴԵՐՁ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՄԲ

Արտօնեալ դրամագլուխ	20,000,000
Գանձեալ »	10,000,000
Մահուան արկածից դէմ պահեստի	12,000,000

Արեւելից Տնօրէն. Մ. Էօժէն Բարարօբ
» Լիազոր գործակալ և քննիչ. Մ. Նազարէթ Եազըճեան

ԹՈՒՐՔԻՈՅ ԳԼԽԱՒՈՐ ՔԱՂԱՔԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Տեարք Պալեօզեան և Պալըքճեան Զմիւռնիա. Գասպարեան և Տամատեան Ատանա. Գ. և Ս. Սեթեան Հալէպ. Բ. Շերէֆէտտին և Տէրունեան Ատալիա և Սպարթա. Սիմէօն Տէյիրմէնճի օղլու Թօնեա, ևն ևն։

Ֆրանքօ-Հօնգրական կենաց անանուն ընկերութիւնը խիստ դիւրամատչելի պայմաններով մահուան դէմ ապահովութիւններ կ'ընդունի, նոյնպէս փոքր տոկոսօ և ամէկանց ի չափահասութեան վճարելի պայմանաւ։

Աւելորդ կը համարիմք ըսել թէ ամէն ընտանեաց և զաւակաց տէր անձանց իբր նախրական պարտականութիւն մ'է տարեկան փոքրիկ զոհողութեամբ մը իւր կեանքն և իւր զաւակաց ապագան ապահովել, կամ ի ծերութեան օրերու և կամ յետ մահու իւր սիրելի կինն և զաւակունքը, աղքատութեան սոսկալի ճիրաններէն հեռի պահելու համար ուստի արդեօք հասարակութեան լուրջ ուշադրութիւնը կը հրաւիրեմք Ֆրանքօ-Հօնգարական ընկերութեան շահաւէտ պայմաններուն և վճարահանութեան մասնաւոր առաւելութեանց որ մեն մի տարի Պիւտաբէշթի մէջ ի ներկայութեան կայսերական պաշտօնէից տեղի կունենան, մեն մի շահող թիւ 100 անգլիական ոսկի շահելու պայմանաւ։

Աւելի ընդարձակ և կարեւոր տեղեկութիւններ ստանալու համար պէտք է դիմել առ վարչութիւն. Ամեն լեզուէ յայտարարութիւնք ձրի կը տրուին։

Գոհունակութեամբ կը ծանուցանեմք յարգոյ հասարակութեան թէ, ընկերութեանս 1885 յունվար 1էն մինչ 1886 տարւոյն յունվար 1ի ընդհանուր գործողութեանց հաշուեդրացուցակին, (փոխադրեալ Աւստրօ-Հունգարական կառավարութեան) պահեստի գումարին վրայ 2 միլիոն Ֆրանքի պատկառելի գումարի մը յաւելումն գոյացած է, որով անցեալ տարւոյն 10 միլիոն պահեստի գումարը ներկայիս 12 միլիոն է։ 654

L'EQUITABLE

ԷՔԻԹԱՊԸԼ, *ապահովագրական ընկ. ընդդէմ հրդեհի*

կեդրոնատեղի' 5, Կրէդրի փողոց, Բարիզ

Այս ընկերութիւն ընդդէմ հրդեհի կ'ապահովագրէ կարասիներ, անշարժ կալուածներ, ապրանքներ մաքսատան կամ մթերանոցի մէջ, շահաւէտ պայմաններով։ Դիմել առ ԱՆՏՐՈՍ ԱՄՊԱՐՃԵԱՆ
Ընդհանուր Գործակալ Ընկերութեան
11—26 — 1850 — 40, Թաշ խան, Պաղչէ-Գաբու, Պոլիս

ԳԱՐԵՋՈՒՐ ՏԱԿԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ

ՍԹԻՆՖԷԼՏ (ԳՐԱՑ)

ԳՈՐԾԱՐԱՆ ՐԻՆԻՆԿՀԱՈՒԶ ԵՂԲԱՐՑ

ԱՄԵՆԷՆ ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿ ՄԻՇՏ ԹԱՐՄ

Ընդհանուր կեդրոնատեղի Մ. ՄՈՐԻՑԻՕ ՖՐԱՆՔԷԼ

Վօյվօտա, Վիդալիս խան, Ղալաթիա, Եշիլ խանի քով

ՍԹԻՆՖԷԼՏի *գործարանն, որ կը գտնուի* ԿՐԱՑ *քաղաքին մէջ (Ստիրիա), առաջնակարգ հաստատութիւն մ'է՝ 1852ին հիմնեալ, և Աւստրօ-Հունգարիոյ մէջ գարեջրի գործարանց արտադրութեան մէջ առաջին տեղը կը բռնէ։*

Ստինֆէլտի գործարանն 1887ին արտադրած է 43,000 հեկտոլիտր։ 1715

ՏՕՔԹՕՐ ԱՅԷՐԻ

ՉԷՐՐԻ ՓԷՔԹՕՐԱԼԸ

Տօքթօր Այէրի Չէրրի փէքթօրալը բաղկացնող նիւթերը թէ յԱմերիկա և թէ ի Պոլիս հրատարակուած են, ուզողը կրնայ մեր մաղազայէն դեղագիրը ստանալ։ Բժիշկներն իսկ կը յանձնարարեն այս դեղը հիւանդներու։ Նշանաւոր դեղ ու դարման է հարբուխի, հազի և կոկորդի ու կուրծքի հիւանդութեանց։ Բազումք վտանգաւոր հիւանդութենէ ազատած են սորա միջոցաւ։ Նոր սկսած թոքախտը կը բուժէ և յառաջացեալ թոքախտ ունեցողներու նեղութիւնն ամենայնիւ կը մեղմացնէ։ Դեղավաճառք կը ծախեն։ Այէրի Չէրրի Փէքթօրալը հարցունելու է։ Կեդրոնատեղին է Մինասեան և ընկերաց Ամերիկեան վաճառատունն որ ի Ղալաթիա։

Մինասեան և ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ կը ծախուին Ամերիկայէն նոր եկած ոսկեզօծ իրեր որք գրեթէ ոսկւոյ նման տեւողական են ու գեղեցիկ, ինչպէս են թեւնոցի ու կուրծքի կոճակներ, ժամացոյցի շղթայք կանանց և արանց համար, պռօշներ, մանեակներ, օղեր և այլն, եկած է նաև նորելուկ քարիւղի լամպաներ 60 և 80 ճրագի լոյսով. Ընտիր կարի մեքենայներ. Մեքենայով կարելու յարմար կանաց մատնոցներ. Նորանոր Ամերիկայի գեղեցիկ ժամացոյցներ, եւ այլ ընտանեկան պիտոյից վերաբերեալ բազմատեսակ վաճառք որք չափաւոր գներով կը ծախուին։
581

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻՅԷԻ

ՇՈԳԵՆԱՒՈՒՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԿԸ

1888 Յունիս 2 Հինգշաբթի օրէն սկսեալ մինչև ցնոր տնօրինութիւն

Բաց ի կիրակի օրերէն) Եւրոպական եզերէն կամուրջ եկող շոգենաւուց երթեւեկութեան ժամերը

Ժ. Ր.		Թ.
11 —	Ենիմ. Մեզարպ. Պէօյիւք. Թարպ. Ենիքէ. Միրկ. Ռ. Հիսար	19
12 —	Ենիմ. Մեզարպ. Պէօյ. Թարապիա Ենիքէ. Իսթէն. Միրկ. Պօյաճ. Ռ. Հիսար Պեպ. (Պեպէքի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի)	17
1 15	Ենիմ. Մեզպ. Պէօյ. Թար. Ենիքէ. (Ենիքէօյի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) Ուրբաթ օրերը Իսթէն. Միրկ. Պօյաճ. Ռ. Հիսար Պեպէք	18
1 45	Ենիքէ. Իսթէն, Միրկ. Պօյաճ. Ռ. Հիսար Պեպէք (Արնվ. շոգենաւին հետ պիտի հաղորդակցի) Բացի ուրբաթէ.	34
2 30	Ենիմ. Մեզպ. Պէօյ. Թարպ. Ենիքէ. Իսթէն. Միրկ. Պօյաճ. Ռ. Հիսար Պեպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշիկ.	33
4 15	Ենիմ. Մեզպ. Պէօյիւք. Թարպ. Ենիքէ. Իսթէն. Միրկ. Պօյաճ. Ռ. Հիսար Պեպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշիկ	18
5 45	Ենիմ. Մեզպ. Պէօյ. Թարպ. Ենիքէ. Իսթէն. Միրկ. Պօյաճ. Ռ. Հիսար Պեպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշիկ.	22
7 —	Ենիմ. Մեզարպ. Պէօյիւք. Թարապ. Պէյգօզ Բաղչ. Ենիքէ. Միրկ. Գանլըճ. Ռ. և Ա. Հիսար Գանտիլ. Արնավ. Չէնկ. Պէյլէր. Օրթաք. Գուզ. Պէշիկ. Իւսկ.	25
8 15	Գավագ Ենիմ. Մեզ. Պէօյ. Թար. Ենիքէ. Միրկ. Ռ. Հիսար Պեպէք Արնվ. Գուրչ. Օրթ. Պէշիկ.	19
10 —	Մեզարպ. Պէօյ. Թարապ. Ենիքէ. Միրկ. Ռ. Հիսար Արնավ. Օրթաք. Պէշ.	21

Արնաւուտքէօյէն կամուրջ եկող շոգենաւուց ժամերը

11 —	Ենիք. Իսթէն. Պօյաճ. Ռ. Հիսար Պեպէք Արնավ. Գուրուչ. Օրթ. Պէշիկ.	22
11 —	Պեպէք Արնվ. Գուրուչ. Օրթ. Պէշիկ.	21
12 —	Պեպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշ.	33
12 35	Արնվ. Գուր. Օրթ. Պէշիկ.	25
1 5	Պեպէք Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկ. Գապ.	22
1 35	Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկ.	23
2 20	Պեպէք Արնվ. Գուր. Օրթ. Պէշ. Գապ.	28
3 —	Արնվ. Գուր. Օրթ. Պէշ. (Բացի ուրբ.)	23
4 15	Պեպէք Արնվ. Գուրուչ. Օրթ. Պէշիկ. Գապաթաշ	34
10 50	Հիսարէն ուղղակի կամուրջ	22
11 20	Պեպէքէն ուղղակի կամուրջ (Բացի ուրբաթէ)	25

Ասիական եզերէն կամուրջ եկող շոգենաւուց ժամերը

11 —	Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզ. Գապ.	34
11 20	Պէյքօզ Բաղչ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. (Գանտ. պիտի հաղորդ.)	23
12 —	Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզկ. Պէշիկթաշ	28
12 45	Ռ. և Ա. Գավագ Մեզպ. Պէօյք. Թարպ. Պէյգ. Բաղչ. Չուպուգ. Գանլըճ. Ա. Հիսար Գանտիլ. Վան. Չէնկ. Պէյլէր. Գուզկ.	32
1 5	Գանտ. Վան. Չէնկ. Պէյ. Գուզկ. Պէշ.	19
2 —	Մեզպ. Պէօյիւք. Թարպ. Պէյքօզ Բշպ. Գանլ. Չուպ. Ա. Հիսար Գանտ. Վան. Չէնկ. Պէյլ. Գուզկ.	21
4 —	Գանտ. Վան. Չէնկ. Պէյլ. Գուզկ. Իւսկ.	32
4 15	Պէյգ. Բաղչ. Չուպ. Գանլ. Ա. Հիսար Գանտ. Վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզ. Պէշիկ.	17
9 —	Պէօյիւք. Թարպ. Պէյգօզ Բաղչ. Գանլըճա Ա. Հիսար Գանտիլ. Վանիք. Չէնկէլ. Պէյլէրպէյ. Գուզկ. Իւսկ. (Կիրակի և ուրբաթ օրերը Չուպ.)	23
9 30	Գանտիլլի Չէնկէլքէօյ Ուղղակի կամ.	33
10 20	Գանտիլլիէն ուղղակի կամուրջ	28
11 —	Գուզկունճուքէն ուղղակի կամուրջ (Բացի ուրբաթէ)	33

(Բաց ի կիրակի օրերէն) կամուրջէն Եւրոպական եզերք երթեւեկող շոգենաւուց ժամերը

12 —	Պէշիկ. Օրթ. Գուր. Արնվ. Պեպէք Ռ. Հիսար Պօյճ. Ենիքէ. Թար. Պէօյիւք. Մեզարպուրնու	21
1 —	Պէշիկ. Օրթ. Արնվ. Ռ. Հիսար Միրկ. Ենիքէ. Թարպ. Պէօյիւքտ. Ենիմ.	33
2 —	Գապաթ. Իւսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթ. Պէյլէր. Չէնկէլ. Արնավ. Գանտիլ. Ա. և Ռ. Հիսար Գանլըճ. Միրկ. Ենիքէ. Բաղչ. Պէյգ. Թարապ. Պէօյ. Մեզ. Ենիմահալլէ	25
2 30	Պէշիկ. Օրթ. Գուր. Արնվ. Պեպէք Ռ. Հիսար Միրկ. Ենիքէ. Թարպ. Պէօյք. Մեզպ. Ենիմ.	18
4 —	Պէշիկ. Օրթ. Արնվ. Ռ. Հիսար Պօյճ. Ենիքէ. Թարպ. Պէօյիւք. Ենիմ.	22
5 40	Գապաթ. Պէշիկ. Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պեպէք. Ռ. Հիսար Միրկ. Իսթէն. Ենիքէ. Պէյգ. Թարապ. Պէօյ. Մեզր. Ենիմ. և Գավագներ	19
7 —	Պէշիկ. Իւսկ. Գուզկ. Օրթ. Պէյլէր. Չէնկ. Արնվ. Գնտիլ. Ա. և Ռ. Հիսար Միրկէօն Ենիքէ. Թարպ. Պէօյիւք.	23
8 30	Պէշիկ. Օրթ. Արնավ. Պեպ. Ռ. Հիսար Միրկ. Ենիքէ. Թարպ. Մեզար. Պէօյ.	21
10 —	Ենիքէ. Թարպ. Պէօյք. Մեզպ. Ենիմ. (Ուրբաթ օրերը 9 45ին)	18
10 30	Ռ. Հիսար Պօյաճ. Միրկ. Իսթէն. Ենիքէօյ, Թարապիա, Պէօյի. Մեզար. Ենիմ.	32
11 10	Ենիքէ. Թարպ. Պէօյ. Մեզպ. Ենիմ.	19
11 35	Պեպէք Ռ. Հիսար Միրկ. Իսթէն. Ենիքէ.	22

Կամուրջէն Արնաւուտքէօյ երթեւեկող շոգենաւուց ժամերը

12 30	Ուղղակի Պեպէք	22
1 —	Ուղղակի Արնաւուտգիւղ	23
1 40	Ուղղակի Պեպէք	28
2 30	Ուղղակի Արնվ. (Բացի ուրբաթէ)	25
3 15	Պէշիկ. Օրթաք. Գուրուչ. Արնավ. Պեպէք	34
9 50	Պէշիկ. Օրթ. Գուրուչ. Արնավ. Պեպ. Ռ. Հիսար (Վափոր եկող շոգենաւին հետ պիտի հաղորդակցի)	22
10 35	Պէշիկ. Օրթ. Գուր. Արնավտ. Պեպէք (Բացի ուրբաթէ)	25
11 10	Գապ. Պէշիկ. Օրթ. Գուր. Արնավ. Պեպէք Ռ. Հիսար Պօյճ.	28
11 40	Պէշիկ. Օրթ. Գուրուչ. Արնվ. Պեպէք (Բացի ուրբաթէ)	33
12 —	Պէշիկ. Օրթ. Գուր. Արնվտ.	25

Կամուրջէն Ասիական եզերք երթեւեկող շոգենաւուց ժամերը

12 15	Իւսկ. Գուզկ. Պէյլ. Չէնկ. Վանիք. Ա. Հիսար Գանլ. Պէյգօզ Ենիքէ. (Բացի ուրբաթէ)	34
12 30	Ուղղակի Գանտիլլի	19
2 35	Իւսկ. Գուզկ. Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար Գանլ. Չուպուգ. Բ. պահճէ Պէյգ.	17
3 20	Ուղղակի Գանտիլլի	32
8 35	Իւսկ. Գուզկ. Պէյլ. Չէնկ. Վանիք. Գանտիլլի	33
9 25	Պէշիկթաշ, Գուզկունճ. Պէյլէր. Չէնկէլ. Վանիք. Գանտիլ. (Գավագներ գացող շոգենաւին հետ պիտի հաղորդակցի.)	28
10 5	Գանտիլլի Ա. Հիսար Գանլ. Չուպ. Բաղչայ. Պէյգ. Թարապ. Մեզարպ. Գավագներ	17
10 40	Իւսկ. Գուզ. (Բացի ուրբաթէ)	33
10 45	Պէշիկ. Գուզկ. Պէյլէր. Չէնկէլ. Վան. Գանտիլլի Պեպէք (Գանտիլլիի շոգենաւին հետ պիտի հաղորդակցի)	34
11 15	Գանտիլ. Ա. Հիսար Գանլըճ. Չուպ. Բաղչայ. Պէյգօզ	23
11 45	Գապթ. Գուզ. Պէյլ. Չէնկ. Վանիք.	21

Ամեն ուրբաթ առաւօտ ժամ 4 30ին կամուրջէն շոգենաւ մ'ելնելով Իւսկ. Գուզկ. Պէյլ. Չէնկ. Վանիքէօյ Գանտ. Ա. Հիսար Գանլըճա Չուպուգլը Բաղչայ. Պէյգօզ Թարպ. Պէօյք. Մեզպ. պիտի երթայ, և երեկոյին ժամ 10 45ին Մեզարպուրնուէն ելնելով յիշեալ նաւամատոյցները հանդիպելով կամուրջ պիտի իջնէ։

Ամեն ուրբաթ երեկոյ ժամ 11ին Ենիմահալլէէն շոգենաւ մ'ելնելով Մեզ. Պէօյ. Թարպ. Միրկ. Արնվ. Պէշիկ. հանդիպելով կամուրջ պիտի իջնէ։

ԻՒՍԿԻՒՏԱՐ ԵՐԹԵՒԵԿՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐ

Իւսկիւտարէն	Կամուրջ	Կամուրջէն	Իւսկիւտար
11 —	5 45 Պէշիկ.	11 15	6 20 Պէշիկ.
11 30	6 20	11 45	7 5
12 —	7 5	12 15	8 15 Պէշիկ.
12 30	8 15 Պէշիկ.	12 45 Պէշիկ.	9 —
1 — Պէշիկ.	9 —	1 20	9 40
1 30	9 30	1 50	10 10 Պէշիկ.
2 — Պէշիկ.	10 — Ֆէրպ.	2 15	10 30 Ֆէրպ.
2 30	10 10 Պէշիկ.	2 50 Պէշիկ.	10 40 Գզ.
3 —	10 40	3 30	11 —
3 15 Ֆէրպօթ	11 — Ֆէրպ.	3 45 Ֆէրպօթ	11 15 Ֆէրպ.
3 40	11 —	4 —	11 20
4 15 Պէշիկ.	11 25	4 40 Պէշիկ.	11 45
4 30 Ֆէրպօթ	11 40	5 15 Ֆէրպօթ	11 50 Գզ*
4 35 Վափոր	12 5	5 30	12 5
5 —			

ԿԻՐԱԿԻ ԵՒ ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐ

Իւսկիւտարէն	Կամուրջ	Կամուրջէն	Իւսկիւտար
11 15	6 20	11 15	7 5
12 —	7 5	12 —	8 15 Պէշիկ.
12 45	8 15 Պէշիկ.	12 45 Պէշիկ.	9 —
1 30 Պէշիկ.	9 —	1 35	9 40
2 15	9 30	2 25	10 10 Պէշիկ.
3 —	10 — Ֆէրպ.	2 50 Պէշիկ.	10 30 Ֆէրպ.
3 15 Ֆէրպօթ	10 10 Պէշիկ.	3 35	10 40
3 30	10 45	3 45 Ֆէրպօթ	11 20
4 15 Պէշիկ.	11 — Ֆէրպ.	4 35	11 15 Ֆէրպ.
4 30 Ֆէրպօթ	11 10	4 50 Պէշիկ.	11 40
»4 35 Վափոր	11 40	5 15 Ֆէրպօթ	12 5
5 —	12 5	5 35	
5 45 Պէշիկ.		6 15 Պէշիկ.	

* Այս երթեւեկութիւն հրեից տօներուն, և շաբաթ օրերը Գուզկ. չպիտի հանդիպի։
» Այս երթև. կիրակի օրերը ժամ 4ին։

ՀԱՐԷՄ ԻՍԿԻԼԷՍԻ ԵՐԹԵՒԵԿՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐ

ԲԱՑ Ի ՈՒՐԲԱԹ ՕՐԵՐԷՆ

1 30 Հարէմէն Սալաճագ (բաց ի կիրակի օրերէն)
4 — » »
10 30 » » (բաց ի կիրակի օրերէն)
11 15 » » (կիրակի օրեր ժ. 10 45ին)
1 — կամուրջէն Հարէմ Սալաճագ (բաց ի կիրակի օրերէն)
3 30 կամուրջէն Հարէմ անտի Սալաճագ
10 10 կամուրջէն Հարէմ անտի Սալաճագ (բաց ի կիրակի օրերէն)
11 — կամուրջէն Հարէմ անտի Սալաճագ (Կիրակի օրերը ժ. 10 30ին).

ԻՒՍԿԻՒՏԱՐ ՍԻՐՔԷՃԻ ԻՍԿԷԼԷՍԻ ԵՒ ԳԱՊԱԹԱՇԻ ՄԻՋԵՒ ԿԱՌԱԲԱՐՁ ՇՈԳԵՆԱՒՈՒ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

3 15 Իւսկիւտարէն Գապաթաշ Սիրքէճի
4 30 Իւսկիւտարէն Սիրքէճի
10 — Իւսկիւտարէն Սիրքէճի
11 — » Գապաթաշ
3 45 Սիրքէճիէն Իւսկիւտար
5 15 Սիրքէճիէն Գապաթաշ Իւսկիւտար
10 30 Սիրքէճիէն Իւսկիւտար
11 15 Գապաթաշէն Իւսկիւտար

Ծան. — Օդը մէգամած եղած ատեն, շոգենաւք իրենց գտնուած տեղը պիտի մնան։ 1686